Հայոց Նոր Տարին

Այն տօները, որ հայ ժողովուրդը նշում էր դեռեւս հարիւր տարի առաջ, եւ տօնահանդէսի այն մշակոյթը, որ բնորոշ էր հայերին, շատ քիչ են պահպանուել մեր կենցաղում: Մէկ հարիւրամեակ առաջ նշուող տօներն ու տօնահանդէսի մշակոյթն իրենց տեւական պատմութիւնն են ունեցել, եւ նրանց ծիսական բացայայտումն ու վերլուծութիւնը շերտ առ շերտ ցոյց է տալիս ինչպէս հայ ժողովրդի անցած պատմական ուղին, այնպէս էլ

հազարամեակների ընթացքի տոմարական փոփոխութիւնները, մարդկանց միջեւ յարաբերութիւնների կաղապարները (տղամարդկանց ու կանանց, տարեցների ու երիտասարդների, ազգականների, համայնքի, սոցիալական խմբերի միջեւ) եւ դրանց պատճառաբանուածութիւնը, շրջակայ միջավայրի հանդէպ մարդկանց ու անհատի վերաբերմունքը, բնութիւնից ու երկնային ուժերից ակնկալիքները, ապահով ու անապահով կեանքի մասին պատկերացումները, բնութիւնից, երկնային ուժերից, մարդածին ու բնական աղէտներից, անհատ մարդկանցից սպասուող վտանգները, տագնապներն ու դրանցից պաշտպանուելու ընկալումները եւ այլն: Մեր տօների ժողովրդական արարողութիւններում կարելի է հանդիպել հայոց նախաքրիստոնէական աստուածութիւնների կերպարներին, Հայկի ու Բելի աւանդազրոյցի դրսեւորումներին, Նոյ նահապետի ու ջրհեղեղի մասին պատմութիւնների հետքերին, քրիստոնէութեան մուտքին եւ ընթացքին, քրիստոնէական տօնացոյցի «հայեացման-ազգայնացմանը» եւ նախաքրիստոնէական ծէսերի «քրիստոնէացմանը», Աւարայրի ճակատամարտի յիշողութիւններին, չարի ու բարու մասին հայ ժողովրդի ըմբռնումներին ու պատկերացումներին: Քրիստոնէութեան ընդունումից յետոյ, ինչպէս աշխարհի շատ ժողովուրդների մօտ, հայ ժողովրդի աւանդական տօնացոյցը եւս վերաձեւուեց քրիստոնէական աշխարհայեացքի եւ համակարգուած տօնացոյցի կաղապարով եւ այդ կերպ գոյատեւեց աւելի քան մէկուկէս հազարամեակ: Այսօրուայ եկեղեցական տօնացոյցն անուանապէս արտացոլում է այդ մէկուկէս հազարամեակի ընթացքում մեր ժողովրդի կենցաղում լիարիւն կեանքով ապրած բուն ժողովրդական եւ եկեղեցական տօների ամբողջութիւնը. յիրաւի, այդ երկար ու ձիգ դարերի ընթացքում թէ՛ եկեղեցին, թէ՛ ժողովուրդը նշել են Ծնունդ, Տեառնընդառաջ, Ս. Սարգիս, Բարեկենդան, Ծառզարդար, Զատիկ կամ Ս. Յարութիւն, Համբարձում, Խաղողօրհնէքի կամ Վերափոխման, Ս. Խաչի տօները, Կանաչ-Կարմիր կիրակիները, Վարդավառը: Թէ՛ եկեղեցին, թէ՛ ժողովուրդը նշել են այլ, աւելի կամ պակաս կարեւոր տօներ, եղել են ոչ համահայկական ընդգրկուածութեան, զուտ տեղական տօներ, թերեւս դրանց մի մասը մոռացուել է, փոխարինուել ուրիշներով: Վերը նշուածներն այն տօներն են, որոնք 19-20 դդ. սկզբին նշւում էին ողջ հայ ժողովրդի կողմից եւ, ըստ երեւոյթին, իրենց մէջ խտացրել են մեր ժողովրդի տօնականութեան ընկալումները, առօրեայ կեանքից դուրս գալու եւ տօնական կեանքով ապրելու ձեւերը:
Ինչպէ՞ս կոչել դրանք. ժողովրդակա՞ն, ազգայի՞ն, թէ՞ եկեղեցական տօներ: Վերոյիշեալ տօների իմաստով ընդհանուր առմամբ դրանք մեծ չափով նոյնն են: Տօների մէջ ամբողջացել, ընդհանրացել, նոյնացել են ժողովրդականն ու եկեղեցականը: Ժողովրդականը յաճախ դարձել է եկեղեցական եւ ընդունուել եկեղեցու կողմից, եկեղեցական-քրիստոնէականն էլ իր հերթին դուրս է եկել եկեղեցու

պատերից եւ դարձել ժողովրդական կենցաղի անբաժանելի մասը: Անշուշտ տօների ժամանակ կատարուող ժողովրդական շատ ծէսեր ոչ միայն եկեղեցու կողմից չեն ընդունւում, այլեւ հակասում են քրիստոնէութեան տրամաբանութեանը: Դրանք բազմաթիւ են. զանազան գուշակութիւնները, չարխափան կանխարգելիչ ծէսերը, հմայական ծէսերը, վիճակահանութիւնները, նախաքրիստոնէական աստուածներին կամ ոգիներին ներկայացնող տիկնիկները, կրակի պաշտամունքին առնչուող խարոյկները, ջրի պաշտամունքի արարողութիւնները եւ այլն: Սակայն դարերի ընթացքում հայ հոգեւորականները կարողացել են հաշտուել դրանց անխուսափելի գոյութեան հետ եւ երբեմն նոյնիսկ մասնակցել դրանց: Այսպիսով՝ բուն ժողովրդական, այսպէս կոչուած՝ ազգային սովորութիւնների մի մասը պահպանուել, փոխանցուել են սերնդէսերունդ եկեղեցական տօների միջոցով: Ուսումնասիրողները հայ ժողովրդի տօնացոյցում բացայայտում են նրա վաղնջական շերտերը, տեսնում արեւի ու կրակի, ջրի ու հողի պաշտամունքին նուիրուած հանդիսութիւններ, նախաքրիստոնէական շրջանի աստուածութիւններին, մասնաւորապէս երկրագործական աշխատանքները եւ անձնական ու հասարակական բարեկեցութիւնը հովանաւորող ուժերին նուիրուած ծէսեր: Իրենց ծագումով դրանց զգալի մասը գալիս են մեր ժողովրդի ձեւաւորման շրջանից եւ պատմութեան ընթացքում անընդհատ ձեւափոխութիւնների ենթարկուելով, կորցնելով, լրացուելով, «ծպտուելով», մասնատուելով եւ այլն, մինչեւ այսօր, այնուամենայնիւ, հնարաւորութիւն են տալիս վերլուծել եւ թափանցել մեր մշակոյթի վաղնջական շերտերը:



Այս երեւոյթն առանձնապես բացառիկ չէ: Աշխարհի բազմաթիւ ժողովուրդներ կրօնական, գաղափարախօսական, քաղաքական համակարգերի փոփոխութիւններից յետոյ շարունակում են կատարել իրենց ազգային ծէսերը:

Հայոց տօնացոյցի եւ տօնահանդէսի մշակոյթի տրամաբանական զարգացման ընթացքում բացառիկն այն է, որ 20րդ դարասկզբին կտրուկ փոխուեց այդ ընթացքն ինքնին:

1915-1920թթ. եղաւ Արեւմտեան Հայաստանում եւ Կիլիկիայում ապրող հայերի բնաջնջման ու աշխարհասփիւռ լինելու շրջանը, միաժամանակ խաթարուեցին դարերի ընթացքում կերտուած եւ ազգային դիմագիծն ամբողջացնող մշակութային շերտերը: 1920թ. Արեւելեան Հայաստանում տեղի ունեցած քաղաքական ու հասարակական խոշոր փոփոխութիւններն իրենց հերթին կտրուկ փոխեցին անցեալից եկող աւանդական ազգային արժէքների բնականոն զարգացման ուղին, դրանց փոխարինելու եկան վարչակարգի գաղափարախօսութեանը ծառայող եւ այդ գաղափարախօսութիւնը հաստատող արժէքները: Աւանդական ազգային տօնացոյցը այդ արժէքների համակարգի մեջ չէր մտնում, ուստի եւ այն ոչ միայն չէր կատարւում, այլեւ յաճախ ենթարկւում էր գաղափարական հետապնդումների, իսկ կատարողները՝ քաղաքական հետապնդումների:

Սա շատ աւելի հետեւողական պայքար էր ազգային մշակոյթի դէմ, քան ժամանակին մղում էր նորամուտ քրիստոնէութիւնը: Եթէ քրիստոնէութիւնը վերաձեւեց ժողովրդական տօնացոյցը իր

կաղապարով, ապա ժողովրդական տօնահանդէսը գոյատեւեց նրան զուգահեռ, նրա հետ միասին եւ այնուամենայնիւ՝ իր ուրոյն կեանքով: Եթէ նախաքրիստոնէական շրջանում հայ ժողովուրդն ունէր, դիցուք, կրակի պաշտամունքին նուիրուած տօն, ապա քրիստոնէական Տեառնընդառաջի ժողովրդական տօնահանդէսը, քրիստոնէական արարողակարգի կողքին, շարունակեց պահպանել այդ նախաքրիստոնէական տօնի ազգային ծէսերը: Աւելին, քահանան իր մասնակցութիւնն էր բերում խարոյկներ վառելու եւ նրանցով գուշակութիւններ անելու սովորոյթին: Նոյն կերպ քրիստոնէական Ս. Յարութեան, Համբարձման տօներում պահպանուել եւ նոյնիսկ զարգացել են ժողովրդական Զատիկն ու Վիճակը: Տարբեր ձեւերով, «ծպտուելով» քրիստոնէական հերոսների կերպարներում, երբեմն պահպանուել, գոյատեւել եւ նոյնիսկ զարգացել են որոշ նախաքրիստոնէական Աստուածներ (օրինակ, Սուրբ Սարգիսը): Սա բնականոն զարգացման գործընթաց էր, այդ կարգի փոփոխութիւնների ենթարկւում են բոլոր ժողովուրդների մշակութային համալիրներն ընդհանրապէս, տօները՝ մասնաւորապէս: Այլ էր 20րդ դարի սկզբի բեկումնային շրջանը հայ ժողովրդի համար: Աշխարհասփիւռ արեւ-մտահայ հատուածն այլեւս հնարաւորութիւն չունէր իր նախնիների տօնականուն վերադառնալու կամ դրանց զարգացումը շարունակելու: Աւելի ուշ առաջացած գաղթօջախներում, անշուշտ, եկեղեցական տօնացոյցը շարունակեց գործել, բայց բնականաբար, հիմնականում եկեղեցական ծէսի շրջանակներում: Արեւելահայ հատուածն էլ, շարունակելով ապրել իր հայրենիքում, արհեստականօրէն դրուեց ո՛չ ազգային, յաճախ՝ մտացածին արժէքները խնկարկելու փաստի առջեւ: Նոր կուռքերը, սակայն, ժողովրդականութիւն չստացան եւ չմիահիւսուեցին տօնականու ժողովրդական պատկերացումներին, հինն էլ հետապնդումների ու պարսաւանքների ենթարկուեց: Դրանց ներդաշնակ զարգացման ընթացքը խաթարուեց: Զգալիօրէն նուազեց ժողովրդի, հասարակութեան ստեղծագործական մասնակցութիւնը տօնական մշակութաշինութեանը. նրան մատուցւում էին պատրաստի ծէսեր (մայովկաներ, շքերթներ, հանդիսութիւններ), պատրաստի երաժշտութիւն, պատրաստի երգեր, պատրաստի ասմունք, որոշ իմաստով՝ ուտեստի պատրաստի, ստանդարտ տեսականի: Պակասեց ժողովրդական երաժշտական եւ տեքստային բանահիւսութիւնը, դրանց փոխարինելու եկան նոր, խորհրդային գաղափարախօսութիւնը ներկայացնող տօնական երգերը:

Մշակոյթի ժառանգորդման իմաստով առհասարակ, տօնահանդէսի մշակոյթի իմաստով՝ մասնաւորապէս խիստ աւերիչ էր Թուրքիայում հայերի հանդէպ իրականացուած ցեղասպանութիւնը: Ցեղասպանութիւնն, ինչպես յայտնի է, ոչ միայն միլիոնաւոր մարդկանց կեանքն արժեցաւ, այլեւ «աւերեց» կենդանի մնացածների թէ անհատական ճակատագրերը, թէ ազգային մշակոյթի ամբողջականութիւնը: Ա-բեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիայի տարածքից զրկուած հայերը փաստացի զրկուեցին նաեւ այն պատմա-մշակութային եւ բնա-աշխարհագրական տարածքից, որտեղ զարգացել եւ բովանդակութեամբ լցուել, յագեցել էին արեւմտահայերի մշակոյթը, որտեղ ձեւաւորուել էին նաեւ տօնական մշակոյթի տարրերը: Դրանք խորապէս կապուած էին տեղանքին, պատմական ու կրօնական սրբազան տարածքներին, տնտեսական գործունէութեան առանձնայատկութիւններին, բնա-կլիմայական պայմաններին, որոնց բացակայութիւնը յաճախ ոչ միայն բովանդակազրկում, իմաստազրկում է ծէսը, արարողութիւնը, այլեւ՝ աւանդաբար ձեւաւորուած համայնքային ու ազգակցական յարաբերութիւնները, երբեմն էլ՝ դրանց շարունակականութիւնը դարձնում է անհնարին:

Տարբեր երկրներում եւ տարբեր ազգային մշակոյթներում յայտնուած հայերի խմբերը ջանում էին բեկոր-բեկոր վերականգնել այն մշակութային ամբողջութիւնը, որը մարդկանց խումբը պարզ սոցիալական խմբից վեր է ածում ընդհանուր պատմա-մշակութային անցեալի գիտակցութիւնը կրող եւ իր ինքնութեան մէջ ընդհանուր արժեհամակարգին պատկանող էթնիկ ընդհանրութեան, ազգային խմբի, որն ապրում է ոչ միայն ընդհանուր էթնիկական յիշողութեամբ, այլեւ յարաբերականօրէն ընդհանուր էթնօ-մշակութային կեանքով: Այդ ջանքերի, փնտռ-տուքի հիմնական յենարանը Հայ Առաքելական եկեղեցին էր, եւ թէկուզ այդ պատճառով սփիւռքի հայերի տօնահանդէսի մշակոյթն ունի ընդգծուած եկեղեցական (պակաս՝ կրօնական) կանոնակարգում ու բովանդակութիւն: Հայրենիքում հազարամեակների պատմութեամբ իմաստաւորուած ժողովրդական մշակոյթի շատ տարրեր նոր երկրներում, նոր տնտեսական, մշակութային, սոցիալական, աշխարհագրական պայմաններում

կորցրին իրենց իմաստը, իսկ հայերի ցրուածութիւնը զրկեց նրանց տօնահանդէսի արարողակարգերին բնորոշ եւ անհրաժեշտ խմբային համընդհանուր յուզականութեան դրսեւորումների, այդ յուզականութեան թելադրանքով զարգացող խմբային մշակութաստեղծ/երաժշտական, բանահիւսական/հնարաւորութիւնից:
Հայ ժողովրդի նոյնարժէք եւ նոյնիմաստ համընդհանուր յուզականութեան մթնոլորտի մէջ մտնելու պարբերականութիւնը եւ տօնական մշակոյթի համընդհանուր ձեւերը փոխարինուեցին մահմեդական արեւելքից մինչեւ քրիստոնէական արեւմուտքի տարբեր մշակոյթներին յարմարուելու եւ իւրաքանչիւր կոնկրետ խմբի տօնական ինքնահաստատման ձեւերով: Այսօր, օրինակ, կաթոլիկ եւ բողոքական երկրներում հայերը այդ երկրների ժողովրդի/ժողովուրդների հետ նշում է Ծննդեան երկու տօն՝ Դեկտեմբերի 25ին եւ Յունուարի 6ին, առաջինը՝ տեղական, երկրորդը՝ հայկական: Բազմաթիւ երկրներում այդ երկրների մշակոյթների թելադրանքով հայերը Նոր տարին նշում են Ծննդեան տօներից յետոյ, մինչդեռ հայոց Նոր տարին, առնուազն 19դ. մինչեւ 20րդ դարի սկիզբ, նշուել է Ծննդեան տօնից առաջ: Սրանք պարզ հերթափոխեր չեն, սրանք տօնական կեանքի տրամաբանութեան մէջ յուզականութեան եւ արարողակարգերի տրամաբանութեան զարգացման տեսակէտից խորապէս կարեւոր փուլեր են:

Այսօր մեր ժողովուրդը յայտնուել է այն իրավիճակում, երբ իր ազգային գոյութիւնը շարունակելու երաշխիքներից մէկի՝ ազգային մշակոյթի գիտակցուած ընկալումը դարձել է առաջնային խնդիր: Շատ շատերը «ազգային մշակոյթի» ակունքներին վերադառնալու փորձեր են անում, երբեմն առանց յստակ գիտակցելու թէ ո՞րն է, կամ ի՞նչն է այդ «ազգային մշակոյթը»: Այդպիսին է Հայաստանում, օրինակ, ներկայացւում Միհրի պաշտամունքը, եւ Արեւը խնկարկելու տօնահանդէսը քարոզւում է որպէս ազգային տօն: Միաժամանակ բազմաթիւ հասարակական կազմակերպութիւններից, մշակութային օջախներից, անհատներից հարցումներ են արւում, թէ որո՞նք են մեր ժողովրդական տօները, ինչպէ՞ս էին դրանք նշւում անցեալում, եւ ինչպէ՞ս պիտի նշենք այժմ: Այդ հարցերին պատասխանելը թէ՛ հեշտ է, թէ՛ դժուար: Դժուար չէ, որովհետեւ, ի վերջոյ, կարելի է նկարագրել թե երբ, որտեղ, ովքեր եւ ինչ ձեւով էին նշում այս կամ այն տօնը: Դժուար է, սակայն, որոշակիօրէն ասել, թէ պէ՞տք է, արդեօք, մենք նշենք նոյն տօները եւ աւելի դժուար է պատասխանել այն հարցին, թէ ի՞նչ ձեւով պիտի այդ արուի: Բանն այն է, որ նախկինում դրանք նշւում էին որոշակի իրավիճակում, որոշակի աշխարհայեացքով, որոշակի կենցաղով, որոշակի հակումներով, որոշակի ճաշակով ապրող մարդկանց կողմից, որոնցից մենք այսօր բաւականաչափ հեռացել ենք: Այն, ինչ խոր իմաստ ունէր հարիւր տարի առաջ ապրող երիտասարդի, աղջկայ, երեխայի համար, համայնքի կամ հասարակութեան համար ընդհանրապէս, կարող է անիմաստ, երբեմն նոյնիսկ ծիծաղելի թուալ այսօրուայ սերնդի համար, որն ապրում է բոլորովին ուրիշ կեանքով, ուրիշ յաւակնութիւններով, ուրիշ աշխարհայեացքով: Անշուշտ բնականոն կեանքով ապրելու պայմաններում ժողովրդական տօները կը զարգանային, կը փոխուէին հասարակութեան փոփոխութիւնների հետ համաքայլ, եւ տօնական արարողակարգը, առանձին ծէսերը ոչ միայն չէին իմաստազրկուի, այլեւ նոր որակով կը խաղային ազգային կեանքով ապրելու գործընթացում ՏՕՆԻՆ վերապահուած դերը: Քանզի ՏՕՆը երեւոյթը, գաղափարը, դէպքը պարբերաբար վերահաստատելուց զատ, եւ նոյնիսկ վերահաստատելու համար, պէտք է

շաղկապուած լինի մարդկային տուեալ խմբի կեանքի ռիթմին եւ կատարի մարդկանց համախմբելու եւ նրանց յոյզերի միասնականութեանը արտաքին դրսեւորում տալու իր կարեւորագոյն դերը: ՏՕՆը, թերեւս, մշակոյթի այն տարրն է, որն առաւել պահպանողականն է ազգային արժէքների պահպանման գործում, ինչը խիստ կարեւոր է մշակոյթի բազմաթիւ տարրերի ապազգայնացման մեր դարաշրջանում: Բազմաթիւ ժողովուրդներ տօնական օրերին են վերապահել ազգային խոհանոցի, ազգային տարազի, ազգային երգ ու պարի, ազգային խաղերի պահպանման ու ժառանգորդման գործը: Ահա այդ կարեւորագոյն դերը կատարելու համար ժողովրդական տօնի հանդիսակարգը պէտք է հարազատ եւ ընդունելի լինի այս կոնկրետ կեանքով ապրող մարդկանց: Ժողովրդական ՏՕՆի ժամանակ ոչ թէ պետք է «բանահիւսական- ազգագրական» խմբեր ելոյթ ունենան, այլ ՏՕՆի բոլոր մասնակիցները պէտք է ընդգրկուեն այդ «բանահիւսական-ազգագրական» կոչուող երգ ու պարի կատարման մէջ: Բոլոր ընտանիքներում տուեալ տօնի օրը պէտք է եփվեն նոյն ճաշատեսակները, թող որ դրանք հարստանան տանտիկնոջ կարողութիւններով, այցելութիւնների անհրաժեշտ կարգը պահպանեն, նոյնիսկ հագուստի մէջ ազգային տարազի գոնէ որեւէ մաս պահպանեն՝ դիցուք ազգային զարդաձեւերի անհրաժեշտ առկայութիւնն ապահովեն: Ներկայացման տարրեր ունենալով հանդերձ՝ ՏՕՆը ներկայացում չէ: Այն կատարողներ ու հանդիսատեսներ չունի, յամենայն դէպս՝ չպիտի ունենայ: Տօնի ընթացքում բոլորը մասնակիցներ են, բոլորը կատարողներ են եւ ուրեմն՝ մշակոյթի ազգային արժէքների հաղորդակիցներ: Այդ իմաստով տօնը պարբերաբար անդրադարձ է համազգային մշակութային արժէքներին տօնի բոլոր մասնակիցների կողմից: Հենց դրանից է զուրկ եղել մեր ժողովուրդը տասնեակ տարիների ընթացքում եւ հենց դրան վերադառնալն է դժուարն ու կարեւորը: Դա է, որ ժողովրդական տօնը տարբերում է եկեղեցական կամ պետական, այլ կերպ ասած՝ պաշտօնական արարողակարգից եւ այդ պրոցեսում է, որ յիրաւի ծաղկում են ժողովրդական երգարուեստը, պարարուեստը, բանահիւսութիւնը, խաղարուեստը, հարստանում խոհանոցը, ազգային զուարճաձեւերը եւ այլն: Ամանորի երգերը, ծննդեան ու Զատիկ-Յարութեան աւետիսները, Ծառզարդարի շրջիկ խմբերի երգերը, վիճակի բախտագուշակ քառեակները ժողովրդական հաւաքական երգարուեստի փայլուն նմոյշներ են, բայց դրանք կանգ են առել 20րդ դարի սկզբի մակարդակին եւ իրենց բովանդակութեամբ ու կատարողական կողմով արտայայտում են այդ շրջանի հասարակական յարաբերութիւնների բնոյթն ու մարդկանց հոգեբանութիւնը, պատկերացումներն ու ակնկալիքները: Դժուար չէ պատկերացնել, թէ դրանց մեխանիկական վերականգնումն ի՞նչ արդիւնք կը տայ. մասնագիտացուած կամ սիրողական խմբերը կը կատարեն, հանդիսատեսները կը նայեն, կը լսեն, եւ տօնի, տօնականութեան ու տօնահանդէսի համընդհանուր դրսեւորում դառնալու փոխարէն դրանք տօնը կը դարձնեն ներկայացում՝ անցեալի կեանքի մասին: Տօնի անքակտելի մասը դառնալու, լինելիութեան քննութիւն բռնելու համար այստեղ կը պակասի տեւական ստեղծագործութեան պահը, ընդ որում՝ ոչ թէ անհատի, մասնագէտի, այլ՝ ժողովրդական, զանգուածային, համընդհանուր ստեղծագործութեան, յանպատրաստի ստեղծագործութեան, որի կարեւորագոյն նախապայմանը համընդհանուր յուզականութիւնն է:

Մեր տօների ժողովրդական կատարումների զգալի մասը վկայում է, որ ժողովուրդը տօներին ի ցոյց է դրել մարդու եւ բնութեան ամբողջականութիւնը, փոխկապակցուածութիւնը, միասնականութիւնը եւ տարբեր ձեւերով միմեանց օգնելու ներդաշնակ կապը: Օրինակ, գարնան տօների մեջ կարմիր թելի նման անցնում է բնութեան զարթօնքի հետ մարդու հաղորդակցուելու եւ բնութեան յղութեան հրաշալի պահին մի կողմից հողը չվնասելու, միւս կողմից հողի բարեբեր վիճակին հաղորդակցուելու եւ օգտուելու ձգտումը: Գարնան կենարար ցօղը տարբեր ձեւերով օգտագործելու, մարդկանց եւ անասուններին օծելու, բուժիչ եւ առատացնող խոտաբոյսերը հաւաքելու, ողջ տարուայ ընթացքում խնայողաբար օգտագործելու եւ բազմաթիւ այլ սովորութիւններ, որոնք լի ու լի հանդիպում են գարնանային տօների ընթացքում, Մեծ պասից սկսած մինչեւ Վարդավառ ընկած տօների ժամանակ, հենց դրա վկայութիւնն են: Համբարձման տօնի դիւթիչ, կախարդական գիշերը, երբ ողջ տիեզերքը սիրով էր շնչում, իսկ սիրահար աստղերը գրկախառնւում ու համբուրւում էին, ամուլ զոյգերը, ականատես դառնալով այդ տիեզերական համբոյրին, կենակցում էին՝ պտղաւորուելու յոյսով, հաւատալով, որ սիրոյ գիշերուայ ամենազօր կախարդանքը կ՛ազդի իրենց ամլութեան վրայ, ինչպէս այն ազդում է ծառ ու ծաղկի, հողի, ընդերքի վրայ: Տօներին միջոցներ են ձեռնարկուել նաեւ բնութեան

ուժերին օգնելու, ինչպէս, օրինակ, Ծառզարդարին պատանիները շրջում էին դաշտերում եւ աւետում գարնան գալուստը՝ կոչ անելով հողին արթնանալ: Վանում Մեծ պասի միջինքին ընտանիքի ամուրի անդամը, լիներ երիտասարդ, թէ պատանի, արեւածագից առաջ գնում էր իրենց ձիւնից դեռ չմաքրուած ցորենի կանաչող արտը՝ աւետելու գարնան գալուստը հետեւեալ խօսքերով. «Աշխարհն լոյս տալու եկողը թող քեզ էլ լիութիւն տայ»: «Հողին օգնելու» նպատակով մատաղներ են արուել յանուն հողի (օրինակ՝ Համբարձման տօնի ժամանակ կաթնով են արել եւ շաղ տուել դաշտերում, Տեառնընդառաջի խարոյկի մոխիրը եւ Ս. Սարգսի փոխինդը շաղ են տուել դաշտերում, Զատիկից մինչեւ Համբարձում, Կիրակի օրերից բացի, Ուրբաթ օրերը նոյնպէս տղամարդիկ հերկ չէին անում, աշխատում էին առհասարակ հողը չշարժել, չտանջել, «շուռ չտալ» եւ այլն), ջրին օգնելու նպատակով՝ կաղանդել-շնորհաւորել են ջուրը, զոհաբերութիւններ են արուել ջրերի ակունքների, աղբիւրների մօտ եւ այլն: Սակայն տօնական ծէսերի ամենամեծ բաժինը, անշուշտ, անհատ մարդկանց եւ մարդկանց խմբերին օգնելու նպատակ են ունեցել. դրանց զգալի մասն ուղղուած էր հասարակական ներդաշնակութեան ու սիրոյ ապահովմանը, սերնդաշարունակութեանը, բերքի եւ նիւթական բարեկեցութեան ապահովմանը:
Հայոց տօները շատ հարուստ երգեր ու պարեր ունէին: Երգերի բովանդակութիւնը համարեայ միշտ համապատասխանել է տուեալ տօնի իմաստին: Նոր տարուայ երգերում հնչել են ընտանիքի բարեկեցութեան ու անհատի երջանկութեան մաղթանքներ, Տեառնընդառաջի, Բարեկենդանի տօներին՝ հասարակական բարեկեցութեան, սիրային, չարխափան-հմայական երգերն էին շատ, Զատկի տօնից մինչեւ Վարդավառ՝ դաշտերի առատութեան, մարագների լիութեան, զոյգերի երջանկութեան, սերնդաճի մաղթանքները, Վարդավառին՝ կատակերգերը, սիրային պչրանքը, ծաղրը եւ այլն: Ընտանիքներին ցորեն, գարի, հաց, իւղ, մեղր, շատ անասուններ, ոսկի ու արծաթ մաղթող երգերում թեման շարունակւում էր իղձերին հասնելու ցանկութեամբ, սոցիալական դիրքի բարձրութեան մաղթանքով: Անթիւ են քնարական երգերը՝ սքանչելի համեմատութիւններով, բնութեան ու մարդկային յոյզերի նրբագոյն ելեւէջների ներկայացմամբ, կարօտով ու սիրով թաթախուն, ուրախ ու տխուր, թախծոտ ու կենսունակ, սրամիտ, սիւժետային, յաճախ՝ սերնդէ-սերունդ փոխանցուած, երբեմն՝ յանպատրաստի: Տօնական երգ ու պարին մասնակցելը, դրանց իմացութիւնը մարդու գեղագիտական եւ հասարակական դաստիարակութեան մաս էին կազմում: Իւրաքանչիւր տարիքային խումբ ունէր իրեն յատկացուած դերակատարումը: Ծննդեան, Յարութեան աւետիսները, Նոր Տարուայ եւ Ծառզարդարի երգային բարեմաղթութիւնները աւելի շատ պատանիների դերակատարումներն էին, Բարեկենդանի, Զատիկի, Վարդավառի խմբային պարերի, գիշերային պարահանդէսների հիմնական մասնակիցները երիտասարդներն էին եւ այլն: Սակայն դրանց ուսուցումը կարեւոր խնդիր էր եւ հասարակութիւնը այս կամ այն ձեւով ու չափով կարգաւորում էր այդ հարցը: Որպէս օրինակ յիշենք Նոր Նախիջեւանի հայկական համայնքում այդ գործընթացի կազմակերպումը: Այստեղ քաղաքի բոլոր թաղերն ունէին իրենց «Աւետիսի տները», որտեղ ձմռան ամիսներին երեկոները հաւաքւում էին երիտասարդները… «Աւետիսի տունը» հիմնականում վարձուած տուն կամ սենեակ էր: «Աւետիսի տները» կառավարելու համար թաղի երիտասարդների կողմից ընտրւում էին երկու երիտասարդ, որոնց պարտականութիւնն էր կարգ ու կանոն պահել «Աւետիսի տներում», զսպել անկարգ անդամներին, լուծել թաղային երիտասարդութեան կոնֆլիկտները (հակամարտութիւնները-Խմբ.), Զատկի եւ Վարդավառի ժամանակ մեծ ճօճ կամ ճլորթի կապել եւ ճօճել թաղի երիտասարդ աղջիկներին, նորահարսներին, տօների ժամանակ մրցախաղեր կազմակերպել եւ այլն: Այստեղ էր, որ կազմակերպւում էին Բարեկենդանի ներկայացումները, որոնք յետոյ պէտք է հեղեղէին փողոցներն ու կալերը: Այս տներում էր, որ անչափահասներին սովորեցնում էին տօնական երգերը, պարերը, նոյնիսկ երգ ստեղծելու արուեստը, դիմակաւորուելը, շրջայցերը, խնջոյք կազմակերպելու, նուէրներ տալու եւ, յատկապէս, նուէրներ ստանալու արուեստը: Իրականում դրանք խիստ կարեւոր գիտելիքներ էին:
19րդ դ. վերջին 20րդ դարի սկզբին Թուրքիայի եւ Ռուսաստանի կազմում գտնուող Արեւմտեան եւ Արեւելեան Հայաստանի հայերի կենցաղում շարունակուող ժողովրդական տօնահանդէսները, կատարման ժամանակով խարսխուած լինելով հայոց քրիստոնէական տօնացոյցի վրայ, ժառանգորդել էին հայոց ժողովրդական հարուստ ստեղծագործական անցեալի ա-ւանդոյթները՝ բնորոշ

ժողովրդական հաւատալիքներով, պաշտօնական քրիստոնէութեան ու «ժողովրդական քրիստոնէութեան» գործնական դրսեւորումներով, հմայութեան դարաշրջանի մշակոյթով, չարի ու բարու ընկալումներով, համայնքայնութեամբ եւ համաժողովրդական ընդհանուր յուզականութեամբ: Պաշտօնական քրիստոնէական տօներից բացի հայերը, յատկապէս գիւղական բնակչութիւնը, շարունակում էր նշել բազմաթիւ ագրարային տօներ: 19րդ դարու հեղինակներից մէկը 1885թ. մասին գրում է. «52 կիրակիներից բացի հայերի 18 եկեղեցական տօներ բաժին են ընկնում աշխատանքային օրերին: Եկեղեցականից բացի նրանք (հայերը-Հ.Խ.) նշում են ժողովրդական աւանդոյթով հաստատուած մի շարք տօներ, ինչպէս 1. Նոր տարին, 2. Սուրբ Սարգսի տօնը, 3. Մեծ Պասի առաջին օրը: Եթէ սրան աւելացնենք «երկրագործական պաշտամունքի» 6 տօներ, ապա արդիւնքում կ՛ունենանք 79 ոչ աշխատանքային օրեր»:

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՀԱՅՈՑ ՏՕՆԱՑՈՅՑՈՒՄ

Մինչեւ քրիստոնէութեան ընդունումը հայոց մէջ կար երկու զուգահեռ տօնացոյց, քաղաքացիական եւ սրբազան: Քաղաքացիական տօնացոյցը շարժական էր, քանի որ պայմանաւորուած էր օրացոյցով: Տարուայ 365 օրերը հայոց օրացոյցով բախշւում էին 13 ամիսների վրայ, որից 12 ամիսներն ունէին 30ական օր, եւ միայն վերջինը՝ Աւելեացը ունէր 5 օր: Հայոց օրացոյցը աստղաբաշխական տարուայ 365 ու 1/4 շրջափուլից ամէն տարուայ 1/4-ը օրը հաշուի չէր առնում, որի հետեւանքով ամէն տարի 1/4 օր օրացոյցից «կորչում էր»: Արդիւնքում 4 տարուայ ընթացքում «կորչում էր» մէկ օր, ինչի հետեւանքով 1460 տարուայ ընթացքում «կորչում էր» մէկ ամբողջ տարի: Պարզ է, որ այդ օրերի «կորուստը» անդրադառնում էր տօնացոյցի այն տօների վրայ, որոնք օրացուցային օրերով էին, այլ կերպ ասած որեւէ ամսի 1ին նշուող տօնը չորս տարի յետոյ մէկ օր առաջ էր ընկնում, 40 տարուայ մէջ՝ 10 օր էր առաջ ընկնում, 400 տարուայ մէջ՝ 100 օր եւ այլն: Այս տրամաբանութեամբ քաղաքացիական Նոր տարին նոյնպէս աստիճանաբար, օրացոյցի սահող գրաֆիկով, «ընկնում էր» տարուայ բոլոր օրերին եւ այդպէս «պտտուելով»՝ միայն 1460 օր յետոյ կրկին համընկնում էր «ելման» օրուայ հետ: Արդիւնքում նոյն տօնը, այդ թւում Նոր տարին, կարող էր զուգադիպել տարուայ բոլոր սեզոններին եւ համապատասխանաբար նշուել ամռան, աշնան, ձմռան կամ գարնան որեւէ օր, որը տուեալ տարին կը զուգադիպէր օրացուցային տարեսկզբին:

Մեզ յայտնի է, որ 428թ. հայոց Նաւասարդի տօնը նշուել է Օգոստոսի 11ին, կամ, այլ կերպ ասած, 428թ. Օգոստոսի 11ը եղել է Նաւասարդի 1ը: Աղբիւրներով հաստատուած այս տարեթիւը հնարաւորութիւն է տալիս որոշ հաշուարկներ կատարել: Օրինակ, ակնյայտ է, որ 428թ.ից չորս տարի անց, այսինքն 432թ. Նաւասարդի 1ը, հետեւաբար նաեւ Նոր տարին, համընկել է Օգոստոսի 10ին, կամ, ընդհակառական, չորս տարի առաջ, 424թ. Նոր տարին հայերը նշել են Օգոստոսի 12ին: Այս հաշուարկի տրամաբանութեամբ Օգոստոսի 11ին հայոց Նոր տարին նշել է մեր թուարկութիւնից առաջ 1032թ., իսկ հայոց քաղաքացիական տօնացոյցի շարունակականութեան դէպքում 428թ.ից յետոյ հայոց Նոր տարին Օոգոստոսի 11ին պէտք է նշուէր 1888թ.:

Քանի որ 100 տարուայ ընթացքում «սահող» գրաֆիկով (ժամանակացոյցով–Խմբ). Նոր տարին (եւ քաղաքացիական այլ տօները) ընդամէնը 25 օրուայ փոփոխութիւն էր կրում, մէկ-երկու սերնդի կեանքում այդ փոփոխութիւնը, բնականաբար, նկատելի չէր լինում:

Շարժական քաղաքացիական տօներից զատ հայ ժողովրդի կեանքում պակաս կարեւորութիւն չունէր, եթէ աւելին չէր, անշարժ սրբազան կամ կրօնական տօնացոյցը, որով կարգաւորւում էին սրբազան տօնական օրերը: Դրանք սերտօրէն կապուած էին բնակչութեան տնտեսական կեանքի հետ, ուղղակիօրէն սեզոնային բնոյթ ունէին եւ չէին կարող նկատելի տեղաշարժեր ունենալ, այլապէս ուղղակի կ՛իմաստազրկուէին: Բերքահաւաքին ուղեկցող ամառային տօնահանդէսներն, օրինակ, լիովին կ՛իմաստազրկուէին, եթէ դրանք «յայտնուէին» ձմռանը կամ գարնանը: Այս տօնացոյցը նոյնպէս «Նոր տարի» ունէր, եւ այլն, Առաջաւոր Ասիայի այլ ժողովուրդների նման, համընկնում էր գարնանային երկրագործական աշխատանքների սկզբի հետ եւ նշւում էր գարնանային օրահաւասարին, Մարտի 22 –23ին: Վաղնջական շրջանում, երբ դեռեւս քաղաքացիակն տօնացոյց չկար, հենց Մարտ ամիսն էր «Նաւասարդ»՝ «Նոր տարի» կոչւում, քանի որ Մարտ ամսին էր նշւում Նոր տարին: Եթէ Մարտի 22ը՝ գարնանային գիշերահաւասարի օրը Նաւասարդ՝ Նոր տարի էր, ապա աւելի ուշ ինքը՝ «Մարտ» ամիսը «նաւասարդ» կոչուեց, իսկ Մարտի 22ը Նաւասարդի 1ն էր:

Հետագայում, պետութեան կայացման հետ, երբ կարգաւորւում էր պետական արեւա-լուսնային օրացոյցը (ըստ որոշ հետազոտողների՝ մ.թ.ա. 406թ.), սրբազան Նոր տարուայ անունը կրող ամսանունը պիտի տեղափոխուէր եւ դառնար քաղաքացիական Նոր տարին պարունակող ամսուայ անուն: Հնարաւոր է, որ որոշ ժամանակ «Նաւասարդը» զուգահեռաբար գործածուել է թէ սրբազան՝ կրօնական, թէ քաղաքացիական՝ աշխարհիկ «Նոր տարուայ» անուն, քաղաքացիական օրացոյցում միաժամանակ լինելով թէ տօնանուն, թե ամսանուն: Չի բացառւում նաեւ, որ Սրբազան Նոր տարին ունեցել է «Ամանոր» անունը («ամ»-տարի, «նոր»-լուսին), քաղաքացիականը՝ «Նաւասարդ» անունը:
Հերթական օրացուցային փոփոխութիւնները Հայաստանում տեղի են ունեցել, հաւանաբար, քրիստոնէութեան պաշտօնական ընդունումից յետոյ: Որոշ հետազօտողներ գտնում են, որ քրիստոնէութեան ընդունումով հայերը շարժական քաղաքացիական օրացոյցից անցել են անշարժ հուլեան տոմարին: Բոլոր դէպքերում 4րդ դարում լուրջ փոփոխութիւններ եղան տօնացոյցում, որը քրիստոնէութեան մուտքի հետ շատ արագ վերանայուեց Գրիգոր Լուսաւորչի կողմից: Առաջին հերթին տօնահանդէսի մշակոյթում արգելուեց նախքրիստոնէական սրբազան կրօնական տօնացոյցը: Նախքրիստոնէական տօնական մշակոյթի բազում դրսեւորումներ եթէ ամբողջովին դուրս չմղուեցին կենցաղից, ապա յարմարեցուեցին քրիստոնէական տօնացոյցին: Դեռեւս 4րդ դարում հայոց պտղաբերութեան եւ մայրութեան Անահիտ Աստուածուհուն նուիրուած տօնահանդէսները յարմարացուեցին Մարիամ Աստուածածնին նուիրուած տօներին, Վահագնի տօները՝ Յովհաննէս Մկրտչին (նոյն ինքը՝ հայոց Սուրբ Կարապետ) եւ այլն: Դա, անկասկած, հեշտ գործընթաց չէր: Մարդիկ չէին ուզում, նոյնիսկ չէին կարողանում հրաժարուել դարերով ամրապնդուած աւանդական արժէքներից եւ սովորոյթներից, եւ տեւական ժամանակ գործում էին ժողովրդական-սրբազան ու պաշտօնական-քրիստոնէական տօնահանդէսներ:
Աւելի ուշ, 5րդ դարում, Լուսաւորչի տոհմի վերջին ներկայացուցիչ Սահակ Պարթեւ կաթողիկոսը, հիմք ընդունելով Երուսաղէմում գործող քրիստոնէական տօնա-ծիսական համակարգը, նախաձեռնեց համակովկասեան նոր քրիստոնէական տօնացոյցի ձեւաւորումը: Յունարէնից հայերէն թարգմանուեց քրիստոնէական տօների ողջ համալիրը: Երուսաղէմեան յունարէն ձեռագիրը չի պահպանուել եւ այսօր դրա մասին կարելի է դատողութիւններ անել միայն հայերէն թարգմանութեան օրինակով, որը, հնարաւոր է, որոշ փոփոխութիւնների/խմբագրման է ենթարկուել հայ թարգմանիչների կամ հետագայ արտագրողների կողմից: Բոլոր դէպքերում այն, անկասկած, վաղ քրիստոնէական շրջանի տօնական համալիրն է, որի միջոցով աստիճանաբար դուրս էր մղւում հայոց նախաքրիստոնէական թէ՛ սրբազան-կրօնական, թէ՛ աշխարհիկ-քաղաքացիական տօնացոյցը: Արդիւնքում 5րդ դարից Հայաստանում հաստատուել է Հուլեան տոմարը, եւ, առնուազն պաշտօնապէս, Նոր տարին յայտարարուել է Յունուարի 6ը՝ Քրիստոսի Ծննդեան եւ Յայտնութան օրը:
Աւելի ուշ հայոց պաշտօնական քրիստոնէական տօնացոյցը համալրուել է նորանոր «յիշատակի օրերով», նոր արարողութիւններով, նոր կերպարներով, սակայն այն սկզբունքօրէն հարիւրամեակներ գոյատեւել է առանց էական փոփոխութիւնների: Տօնացոյցում արուող ներդրումները՝ արարողութիւններն ու յիշատակի օրերն արուել են գործնականում տօնացոյցի «հայացման» ուղղութեամբ. ընդհանուր քրիստոնէական սրբերի կողքին հայոց քրիստոնէական տօնացոյցում ներդրուել են Գրիգոր Լուսաւորչի, Վարդանանց եւ այլոց յիշատակի օրեր, Առաջաւորաց պահքը եւ այլն:
Հարիւրամեակների ընթացքում հայոց թէ ժողովրդական, թէ պաշտօնական քրիստոնէական տօնացոյցում զգալի փոփոխութիւններ են եղել: Այդ ընթացքում հայոց նախաքրիստոնէական քաղաքացիական շարժական տօնացոյցն ամբողջովին դուրս է մղուել, անշարժ սրբազան կրօնական տօնացոյցի արարողակարգն զգալիօրէն ներթափանցել է քրիստոնէական տօնացոյցի տօնահանդէսային մշակոյթ, իսկ բուն քրիստոնէական տօնացոյցը դարձել է փաստացի միակ տօնացոյցը:
5րդ դարում Սահակ Պարթեւի կողմից կանոնակարգուած եւ հետագայում փոփոխուած քրիստոնէական տօնացոյցը պաշտօնապէս վերանայուել է միայն 18դ., 1774թ., Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի կողմից: Սիմէոն Երեւանցին կարգաւորեց Յարութեան՝ Զատկի տօնով պայմանաւորուած քրիստոնէական տօները, ձեւաւորեց տօների «ենթակարգութիւնը» եւ այլն: Սիմէոն Երեւանցին

նոյնպէս հայոց Նոր տարուայ տօնը կապեց Քրիստոսի Ծննդեան եւ Յայտնութեան տօնի՝ հետ եւ թողեց Յունուարի 6ին:
Դժուար է միանշանակ ասել, արդեօք երբեւէ Յունուարի 6ին իսկապէս Նոր տարի նշուե՞լ է: Ուշ շրջանի նիւթերից մեզ յայտնի է միայն, որ հայոց որոշ ազգագաւառներում մինչեւ մեր հարիւրամեակի սկիզբը փաստօրէն նշւում էր երկու Նոր տարի, ժողովրդական-ազգային՝ Նաւասարդը՝ Նոյեմբերին եւ քաղաքացիական-պաշտօնական՝ Յունուարի 1ին: Այդպէս էր յատկապէս Արեւելեան Հայաստանում՝ Ղարաբաղում, Գանձակում, Շամշադինում, Զանգեզուրում, Նախիջեւանում, ընդհուպ մինչեւ Սալմաստ: Ինչո՞ւ, սակայն, Նոյեմբերին: Որովհետեւ այդ ժամանակ աւարտւում էր երկրագործ հայերի տնտեսական տարուայ մի փուլը. այգեկութն աւարտուած է, դաշտի բարիքը հաւաքուած, անասուններն էլ անցել են ախոռային կերի, այլեւս արածեցնելու չեն տարւում: Տարուայ այն ժամանակը, երբ կանաչի պակասելու ու ցրտերն ընկնելու պատճառով նախիրն այլեւս չեն տանում արօտ, հայոց մէջ կոչվել է «նախրաթող»: Հայկական գիւղերում ընդունուած էր տնտեսական բազմաթիւ աշխատանքներ կարգաւորել փաստացի գործող տօնացոյցով: Օրինակ, հոտաղ վարձելիս աշխատանքի վերջը սահմանում էին Վարդավառը, կալուորին՝ մինչեւ Խաղողօրհնէք, հորթարածների ու նախրարածների աշխատանքներն աւարտւում էին Նաւասարդին: Ահա այս պատճառով Նաւասարդը կոչւում էր նաեւ Նախրաթող: Նաւասարդ-նախրաթողի անունների շուրջ Տաւուշի շրջանում մինչեւ վերջերս պահպանուած աւանդութիւնը պատմում էր, թէ իբր գիւղի նախիրը պահ էին տուել Նաւասարդ անունով մի նախրապանի: Գիւղում սկսուել էր աշնանային տօնահանդէսը, իսկ Նաւասարդն անասունների պատճառով չէր կարող մասնակցել տօնին: Երկար տատանումներից յետոյ, չդիմանալով գայթակղութեանը, նախրապանը լքում է նախիրը եւ գնում գիւղ՝ զուարճանալու: Իբրեւ թէ այդ օրուանից աշնանային այդ տօնը ստանում է կրկնակի՝ Նաւասարդ եւ Նախրաթող անունները:
Արեւմտեան Հայաստանում, որտեղ նաւասարդի տօնը չէր պահպանուել, Դեկտեմբերին «հորթբթողի» ու «նախրբթողի» պասերից յետոյ տօնական տարին փակւում էր, որ պիտի վերսկսուէր Յունուարի 1ին Կաղանդով՝ Նոր տարով: Այստեղ Նախրաթողի պասը զուգադիպում էր Ս. Յակոբի պասին, եւ Ս. Յակոբի պասը յաճախ կոչւում էր նաեւ «Նախրաթողի պաս»: Արեւելեան Հայաստանում, ընդհակառակն, Նախրաթողով սկսւում էր տօնական բոլորաշրջանը (Նաւասարդով՝ նոր տարով): Նոր տարով ու նոր կեանքով, քանզի Նաւասարդով վերսկսւում էին գարնանն ընդհատուած հարսանիքների շղթան:
Տնտեսական աշխատանքների այս բնական տարեմուտը նոյնքան բնականօրէն կարգաւորում էր տօնական կեանքը. նոր տարին նոր կեանքով մարդկանց կենցաղում շարունակում էր նշուել տնտեսական տարեմտին: Ահա թէ ինչ է գրում ականատեսը 19րդ դարի վերջին. «Ժողովուրդը Նաւասարդը տօնում է այգեկութից ետը, այդ ժամանակ պահունի մրգերն առանձին արկղներում, տոպրակներում են լինում պահած, չիրն ու շիջողն առանձին, գինին՝ կարասները լիք, Աստծու տուած միւս բարիքներն էլ տան պուճախներում խլթխլթում են: Աշունքակէսից անց միջոցին, երբ վաղուց դուռ ու կտուր եղեամով, բանջարարսուկներով զարդարուած են, հայ գիւղացին զգում է, որ Նաւասարդը մօտեցել է»:

ՆԱՒԱՍԱՐԴ – ՆՈՐ ՏԱՐԻ

Ով տայր ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն նաւասարդի,
Զվազելն եղանց եւ զվարգելն եղջերուաց,
Մենք փող հարեաք եւ զթմբկի հարկանեաք
Որպէս օրէն է թագաւորաց:



Այս սքանչելի բանաստեղծութիւն-երգը, որում ուղղակի զօղանջում է «Նաւասարդի» կարօտը, նուիրուած էր այն տօնին, որ հեթանոս հայերը նշում էին Նաւասարդ ամսի (համապատասխանում է Օգոստոսին) ամառային օրերին, որպէս Նոր տարի: Հնագոյն տեղեկութիւնները հաւաստում են, որ այդ վաղնջական ժամանակներում Նաւասարդին նոր տարին նշուել է մեծագոյն շուքով, զուարճահանդէսներով, ձիարշաւներով, բազմապիսի խաղերով, որոնց մասնակցում էին թէ՛ հայոց թագաւորը, թէ՛ ազատանին, թէ՛ ռամիկը: Տօնահանդէսները տեւել են օրեր շարունակ, դրանց ընթացքում կատարուել են զոհաբերութիւններ, կազմակերպուել խրախճանքներ՝ երգ ու պարի ուղեկցութեամբ, թատերախաղեր: Դրանք գլխաւորապէս բացօթեայ, յաճախ՝ գիշերային խարոյկների շուրջ կազմակերպուող հանդէսներ էին ուխտավայրերում, սպորտային եւ զուարճախաղեր, երգ ու պարի հանդէսներ, զոհաբերութիւններ, խրախճանք: Մեծաթիւ ուխտաւորներ են հաւաքուել յատկապէս Բագրեւանդ գաւառի Բագաւան աւանում, որտեղ տօնը նշելու են գնացել հայոց արքունիքն ու ազատանին, եւ որտեղ գտնւում էին հայ ժողովրդի պաշտելի աստուածութիւններին, այդ թւում հայոց մեծազօր աստուածուհուն՝ Անահիտին նուի-րուած տաճարները: Այս շատ սիրուած տօնի շուրջ ժամանակին բազմաթիւ աւանդազրոյցներ են պատմուել, իբրեւ թէ մեր նախահայր Հայկը Բելին յաղթել է հենց նաւասարդին եւ այդ օրուանից պէտք է սկսել հայ ժողովրդի պատմութեան սկիզբը: Պատմում էին նաեւ, որ այդ օրը Նոյեան տապանի՝ Արարատի գագաթին իջնելու եւ ջրհեղեղից մարդկութեան փրկութեան օրն էր, եւ Նաւասարդին նշուող նոր տարուայ տօնը պարբերաբար վերահաստատում էր մարդկութեան նոր պատմութեան սկիզբը:

Քրիստոնեութիւնը Հայաստանում պաշտօնապէս ընդունուելուց յետոյ հեթանոսական շրջանից եկող ազգային միւս տօների շարքում նոր տարին նոյնպէս պաշտօնապէս վերափոխուեց: Գրիգոր Լուսաւորիչը նաւասարդին նշուող այս շքեղ տօնը փոխարինեց Ս. Յովհան Կարապետին նուիրուած տօնով: Արգելուեցին Բագաւանի ուխտագնացութիւնները, տօնական զուարճահանդէսները, զոհաբերութիւնները եւ այլն, քանդուեցին հեթանոսական աստուածութիւններին նուիրուած տաճարները: Տօնական ծիսաշարը պահպանուեց Յուլիսին նշուող Վարդավառում, մասամբ՝ Օգոստոսին նշուող Վերափոխման տօնում, սակայն բուն տօնը, արդէն Նաւասարդ անունով, շարունակեց ապրել: Այն չընդգրկուեց որեւէ տօնացոյցի մէջ՝ ո՛չ եկեղեցական, ո՛չ քաղաքացիական: Նաւասարդ ամսից այն «վտարուեց» պաշտօնապէս, բայց նոր տարուն բնորոշ արարողակարգով ու Նաւասարդի տօն անունով հարիւրամեակներ շարունակ նշւում էր Նոյեմբերի 10ին յաջորդող Կիրակի օրը:

Նաւասարդի տօնակատարութիւնը 19րդ դարի վերջին, անշուշտ, շատ էր տարբերւում մեր նախնիների նաւասարդ-Օգոստոսին նշուող Նոր տարուց, երբ «փողեր ու թմբուկներ էին խփւում» յատուկ ուխտավայրերում հաւաքուած ուխտաւորների կողմից, զուարճանում էին արքունիքն ու գիւղացիները: Նաւասարդին այլեւս ուխտավայրեր չէին գնում, տօնը նշում էին տանը, ընտանիքով, ազգականներով: Սակայն մարդիկ նախապատրաստւում էին տօնին հոգեբանօրէն, ջանում էին մոռանալ վիրաւորանքները, վճարել պարտքերը, մաքուր խղճով դիմաւորել տօնը: Շաբաթ օրը խմորեղէններ էին թխւում (գաթա, նազուկ, բիշի): Երեկոյեան սովորաբար ընթրիք չէր լինում, սակայն սեղանը զարդարւում էր այդ տօնը խորհրդանշող ուտեստով՝ թարմ ու չոր մրգեղէնով, ընդեղէններով, թխուածքներով, որի շուրջ հաւաքուած ընտանիքը, հանդարտ զրուցելով, սպասում էին այցելուներին: Իսկ այցելուները շատ որոշակի էին՝ խնամիական կապերով կապուած ազգականները: Այդ գիշեր նշանուած աղջիկները ընկոյզ, չամիչ, չոր ու թարմ մրգեր, փեսացուի ընտանիքի անդամների համար մէկական զոյգ գուլպայ մի գլխաշորի մէջ ծրարած զգուշօրէն մօտենում էին փեսացուի տանը եւ բաց երդիկից լուռ իջեցնում տօնական այդ նուէրը: Տնեցիներն իրար էին խառնւում, դուրս թռչում տնից եւ ջանում բռնել փախչող հարսնացուին: Եթէ յաջողւում էր՝ տուն էին բերում, հիւրասիրում եւ որեւէ նուէրով ճանապարհում: Հարսնացուի ընտանիքից այդպիսի այցելութիւններ յաճախ արւում էին նաեւ փեսացուի մերձաւոր ազգականների տները: Առհասարակ այդ գիշեր բարեկամների երդիկից ընդեղէններ ու մրգեր, երբեմն նաեւ հաւերի, խնձորների, գաթաների շարաններ գցելը ընդունուած սովորութիւն էր: Այդ նոյն գիշեր 10-12 տարեկան տղաների խմբերը շրջում էին գիւղում, երդիկներից դատարկ գուլպայ իջեցնում եւ տօնական երգեր երգելով՝ տօնական մթերք պահանջում: Նախիջեւանում, օրինակ, երգում էին.

Ակլը մարեմ, մարեմ,
Ձեր տղայի սօլը կ՛արեմ,
Չամիչ տուէք՝ ատամներս շարեմ,
Ընկոյզ տուէք՝ ճակտիս դնեմ,
Նուշ տուէք՝ պորտս ոլորեմ:

Սրան շատ նման էր Սալմաստում երգուող տարբերակը.

Ակլէ մարեմ, մարեմ, մարեմ,
Ձեր տղայի սօլը կ՛արեմ,
Չամիչ տուէք՝ ատամներս շարեմ,
Ընկոյզ տուէք՝ գլուխս ճարթեմ,
Փշատ տուէք՝ փորս լարեմ,
Շաքար տուէք՝ չայ խմեմ,
Պնդուկ տուէք՝ սիրտս ուզելի,
Կարկատ տուէք՝ փորս լցնեմ
Քէօխուայ տանտէր, մի՝ խնայի,
Աստուած ձեր հարսն ու փեսան պահի:

Եւ տանտէրերը, իրօք, չէին խնայում, գուլպան լցնում էին սեղանի բոլոր բարիքներից, թէեւ այցելող տղաների թիւն երբեմն անցնում էր մէկ տասնեակից: Չէին մոռացւում նաեւ անասունները: Այդ օրը գոմը մաքրւում էր յատուկ խնամքով, յարդ էր փռւում եւ յարդի վրայ առատօրէն գարի էին շաղ տալիս, իսկ կովերի պոչերին կարմիր թել էին կապում, որպէսզի առաջիկայ տարին «առատ ու կարմիր օրերով անցներ», կարմիր շոր էին կապում դռան վրայ: Իսկ տանը այդ ընթացքում պատրաստւում էր տօնի գլխաւոր, ծիսական ուտելիքը՝ «կորկոտը» կամ «քեաշկան», Երեւանի շրջակայքում ու Նախիջեւանում՝ «հարիսան»: Խոր կաթսայի մէջ շերտընդմէջ դասաւորում էին ծեծած ու տաք ջրով լուացած ցորենը, նոր մորթուած անասունի (տաւար, խոզ, ոչխար, այծ) մսի իւղոտ կտորները, խուփը ծածկում եւ դնում թոնիրը մարմանդ կրակի վրայ: Հարիսա/քեաշկան եփւում էր ողջ գիշեր: Այս ճաշատեսակին շերեփ պիտի չդիպչէր, Նաւասարդի տօնական ճաշը եփւում էր առանց խառնուելու, որպէսզի տարին յստակ, առանց խժդժութիւնների անցնէր: Այս ուտելիքն այնքան զօրաւոր էր, որ անմաքուր խղճով մարդն անարժան էր համարւում այն ուտելու: Գիշերը շատերը չէին քնում: Պարսկահայոց մէջ, ինչպէս վկայում է Ռաֆֆին, «Նաւասարդի վերջին գիշերում ամենեւին չեն քնում

եւ ոչ էլ իրանց փոքրիկ երեխաներին թոյլ են տալիս, որ քնեն, կամ միայնակ տանից դուրս գան մութի մէջ: Մայրերը կամ հայրերը ամբողջ գիշերը արթուն են պահում բոլոր ընտանիքը տեսակ-տեսակ մրգեղէններ, մանաւանդ ձմերուկ եւ խարբուզակ ուտեցնելով որովհետեւ Խլվլիկը, որ նոյն գիշեր ման է գալիս երդիկի վրայ, գողանալու էր երեխաներին»: Խլվլիկը ըստ այդ պատկերացումների դեւ է, որի մարմնի մեջ ասեղ խրելու դէպքում դառնում է խիստ հնազանդ տան ծառայող, բայց մինչ այդ անորսալի է եւ բազում չարիքներ է պատճառում մարդկանց ու նրանց կենդանիներին: Ուրիշ շրջաններում գիշերային արթնութիւնը տօնական յուզականութիւն ունէր:
Առաւօտեան կողմ, դեռ լոյսը չբացուած, բոլոր տներում վառում էին լոյսերը, սեղանին էր դրւում բուրումնաւէտ հարիսան, ընտանիքը բոլորում էր սեղանի շուրջ: Տան աւագը շնորհաւորում էր Նոր տարին եւ սկսւում էր սրբազան հարիսայի ճաշակումը: Տօնական ճաշատեսակի հետ հաղորդակցումն այնքան անհրաժեշտ էր, որ իւղառատ հեղուկը քսում էին նոյնիսկ նորածին մանուկների շրթունքներին: Արեւը ծագելիս՝ ընտանիքն արդէն զուգուած էր տօնականօրէն, եւ նրա անդամների մի մասն պատրաստւում էր տօնական այցելութիւններն սկսելու, միւսներն՝ այցելուներին դիմաւորելու: Անչափահաս երեխաների գրպաններն ու ծոցերը լցնում էին չոր մրգեղէն, ընկոյզ, քաղցրաւենիք, երիտասարդները վերցնում էին չիր ու չամիչով, խաշած հաւերով ու խմորեղէնով լեցուն մատուցարանները: Այցելում էին նախ այդ տարի ննջեցեալ ունեցած բարեկամների ընտանիքները, նորապսակներին: Զանգեզուրում առաւօտեան միմեանց ուղարկուող մրգեղէնով լի մատուցարանները «լուս» էին կոչւում, եւ այդ «լուսերը» ազգականների տներում կուտակւում էին տասնեակներով: Զոքանչները այցելուներ էին ուղարկում փեսաներին, վերջիններս՝ կնոջ ընտանիքը: Փողոցում միմեանց հանդիպողները համբուրւում էին «քաղցր պառաւես Նաւասարդի պէս, շնորհաւոր Նոր տարի, որդով, դստրով բարով մէկ էլ էս օր հասնես» բարեմաղթութիւններով:
Տանտէրերը եկող հիւրերի գլխին չիր ու չամիչ էին շաղ տալիս՝ առատութեան բարեմաղթութիւններով, իսկ վերջիններս, մատուցարանը տանտիրուհուն յանձնելով՝ շնորհաւորում էին Նոր տարին, նոյնպէս առատ տարի մաղթում:
Առաւօտից սկսած միջոցներ էին ձեռք առնում տարուայ առատութիւնն ու յաջողութիւնը ապահովելու: Մի կտոր կարմիր շոր էին գցում դռան վրայ, որպէսզի տարին «կարմիր օրերով» անցնէր, կժերը ջրով լցնում էին, առհասարակ աշխատում էին դատարկ ձեռքով տուն չմտնել: Ուշադիր հետեւում էին, որ սեղանին դատարկ աման չմնար, կժերի ջուրը լրիւ չվերջանար, վստահ, որ լիքը ամանները լիքը ու բարեբախտ տարի կ՛ապահովեն: Վաղ առաւօտեան հոգ էին տանում նաեւ անասունների ու հանդերի մասին, առատ կեր տալիս անասուններին, ցորեն ու գարի շաղ տալիս դաշտերում: Նոյն ակնկալութեամբ տուն մտած հիւրերին դատարկ ձեռքով բաց չէին թողնում, քաղցրաւենիք էին լցնում գրպանները, որեւէ նուէր (գուլպայ, գլխաշոր, թաշկինակ) էին տալիս մտերիմներին:
Արցախի Հադրութ գիւղում պահպանուել էր այդ օրը անպայման գիւղապետին այցելելու եւ շնորհաւորելու սովորոյթը: Գնում էին տղամարդիկ, իրենց հետ տանելով մէջը արծաթեայ դրամ խրած մէկական խնձոր եւ մի շիշ օղի: Երբ հիմնական այցելուները հաւաքւում էին, գիւղապետը բոլորին հրաւիրում էր խնջոյքի սեղանի շուրջ, որի գլխաւոր զարդն, իհարկէ, «քեաշկան» էր:
Ինչպես վերեւում նշուեց, Նաւասարդով էին սկսւում գարնանն ընդհատուած հարսանիքները: «Օրինաբեր Նաւասարդն է, պատմում է մի հեղինակ, որ իրաւունք է տալիս զուռնաչիներին ծուանները մաքրել ութ ամսուայ լռութիւնը խզել, որովհետեւ Մեծ պաս մտնելով ծուանն էլ ղբուլն (պատեան) է մտնում Նաւասարդից ետը սկսւում են հարսանիքների, պսակների հանդէսները, դրանից վաղ սկսուածը հայկական հարսանիք չէր»: Բուն տօնի օրը, սակայն, հարսանիքներին չէ, որ նուագում էր զուռնան, այն ուղեկցում է տօնական խնջոյքները, ինչպէս նաեւ Նաւասարդեան բազմապիսի խաղերը, քանզի անցեալից ժառանգութիւն մնացած գեղեցիկ սովորութիւններից մէկն էլ խաղերն էին, որոնց անհամբեր սպասում էին երիտասարդները: «Գիւղի ծայրին, պատմում է նոյն հեղինակը, ջահիլներից ոմանք խաղում են ջղալախտի, կը սկարանքի, կնդափետի, հեծի, կռանթուկի, հալի-հալի եւ ուրիշ շատ պատուական խաղեր. ոմանք կոխ են բռնել, ոմանք ղօչ են կռուացնում: Բայց տես խալխը (բազմութիւնը) վազում է կալերի կողմը, ինչո՞ւ գիտե՞ս. ջիրիդ (ձիարշաւ) կայ, իգիթ տղեքը, լաւ ձի նստողները մէյդան են դուրս եկել, որ իրենց կտրիճութիւնը չափեն»: Այս խաղերը, որոնց

անուններն անգամ անծանօթ են մեզնից շատերին, ոչ վաղ անցեալում մեր ժողովրդի տօնական կեանքի անքակտելի մասն էին կազմում: Ծանօթանանք դրանցից մի քանիսին.
Կըռան թօփի (ձեռքի գնդակ).
Խաղացողները բաժանւում են երկու խմբի: Խմբերից մէկը նշանակուած տեղը մի քար է դնում, որի շուրջը խմբւում են խաղացողները: Միւս խմբի խաղացողները ցրւում են բաւական ընդարձակ դաշտում: Քարի մօտ խմբուածներից մէկը տախտակի հարուածով գնդակը նետում է ցրուածներին: Եթէ սրանցից մէկն ու մէկը գնդակը օդում բռնում է առանց վայր գցելու՝ խմբերի դերերը փոխւում են: Եթէ գնդակը չի յաջողւում օդում բռնել, ապա ցրուածներից մէկը գնդակը սղղացնելով-գլորելով գետնի վրայ՝ ջանում է դիպցնել քարին: Այդ դէպքում քարի մօտից տախտակով գնդակին խփողը «կտրւում» է եւ դուրս գալիս խաղից՝ տեղը զիջելով յաջորդ խաղընկերոջը: Իսկ եթէ գնդակը քարին չի դիպչում, ապա խփողը շարունակում է հարուածները: Խմբերը իրենց տեղերը փոխում են նաեւ այն դէպքում, երբ առաջին խմբի բոլոր խաղացողները հերթով «կտրւում» են:
Հալի-հալի.
Խաղացողները բաժանւում են երկու խմբի եւ կանգնում դէմ-դիմաց: Մի կողմը գնդակը «հալում» է, միւս կողմը՝ բռնում: «Հալել» նշանակում է գնդակը բարձր օդ նետելը: Գնդակը օդում որսացողը այս անգամ էլ ինքն է «հալում»: Այն խումբը, որի անդամները երեք անգամ որսում-բռնում են գնդակը, ընտրում են իրենցից մէկին, որը հեծնում է գնդակը օդ նետած դիմացի խմբի խաղընկերոջը: Վերջինիս ընկերներից մէկը կանգնում է հեծնողի առաջ, միւսը՝ ետեւը: Հեծածի ընկերներից մէկը գնդակը նետում է այն հաշուով, որ հեծածը օդում բռնի: Եթէ գնդակը բռնում են կռացածի առջեւը կամ ետեւը կանգնած իր խաղընկերներից որեւէ մէկը, ապա դերերը փոխւում են. հեծածը իջնում է, կռանում, իսկ մինչ այդ կռացածը հեծնում է նրան: Այս գործողութիւնը կոչւում է՝ «էշը փալան է անում»: Իսկ եթէ հեծածը երեք անգամ գնդակն օդում որսում է, ապա նրա ընկերները բոլորը թռչում են հակառակորդ խմբի խաղացողների շալակը, շրջանաձեւ կամ քառանկիւնաձեւ շարւում եւ գնդակը միմեանց նետում: Այս գործողութիւնն էլ կոչւում է «քեաշկա»: Երեք անգամ գնդակը առանց վայր գցելու միմեանց փոխանցելու դէպքում «էշերը« տեղերը փոխում են, եւ հեծածները շարունակում են խաղը: Գնդակը վայր գցելու դէպքում խաղը վերսկսւում է:
Կընդափետի.
Խաղացողները բաժանւում են երկու խմբի: Խաղի գործիքներն են մի թզաչափ ձող՝ «կունդը» եւ մօտ կէս մետրանոց ձողը՝ «կընդափետը»: Ընտրւում են յատկապէս ամուր փայտից պատրաստուած ձողերը: Կընդափետի ծայրին, մի քանի սանտիմետր դէպի խորքը, խազում են այնպէս, որ եթէ կունդը դրուի այդ խազին՝ այն կանգնի կընդափետի վրայ: Խաղացողները հերթով «թոխմախ» են անում. իւրաքանչիւրը կընդափետի խազին կունդը դնելով՝ վեր է թռցնում օդ եւ օդում հարուածելով հեռու գցում, ապա կընդափետը հորիզոնական դնում նախապէս արուած փոքրիկ փոսի՝ «հոբի» վրայ: Եթե կունդը ընկած տեղից ետ են շպրտում այնպէս, որ այն կպչում է կընդափետին, կունդը հոբի մօտից նետողը կտրւում է: Իսկ երբ խաղացողը յաջող «թոխմախ» է անում, նա խաղի իրաւունք է ստանում եւ դառնում հոբի տէրը: Այդ դէպքում նա կունդը դարձեալ դնում է կընդափետի խազին, ծուլ անելով օդ նետում եւ կընդափետով ամուր խփում: Հակառակորդները ջանում են օդում որսալ կունդը, կամ գետնից վերցնելով՝ ետ նետել այն հաշուով, որ այն ընկնի հոբի մէջ: Այդ դէպքում հոբի տէրը կտրւում է եւ իր տեղը զիջում իր խմբի յաջորդ խաղընկերոջը: Խաղում յաղթում է այն խումբը, որն աւելի շուտ է լրացնում նախօրօք որոշուած «սալերի» թիւը: Կարող է լինել 10, 20, 30 կամ աւելի սալ: Համապատասխան քանակով սալեր հաւաքած խմբի անդամներից իւրաքանչիւրը, յաղթելուց յետոյ, «զու» է կանչել տալիս հակառակորդ խմբի այն անդամին, ով իր գցած կունդը ետ էր նետել: «Զու» կանչելը հետեւեալն է. յաղթողներից մէկը կունդը ուղղահայեաց ցցում է հոբի մօտ, կընդափետով խփում՝ թռցնում. կընդի ետեւից բարձրաձայն «զո՛ւ» կանչելով գնում է հակառակորդը եւ առանց «զո՛ւն» ընդհատելու, այսինքն՝ առանց շունչ քաշելու այն ետ բերում մինչեւ հոբը: Եթե «զուն» ընդհատուի՝ ամբողջը նորից կրկնւում է: Այսպէս «զո՛ւ» են կանչում բոլոր պարտուածները:
ԱՄԱՆՈՐ, ՆՈՐ ՏԱՐԻ
Յունուարի 1ին տարին սկսելու եւ Նոր տարուայ սկզբի տօն նշելու սովորոյթը հայոց մէջ ընդհանրացել է վերջին հարիւրամեակում: Արեւմտահայոց շրջանում, Կիլիկիայի տարածքի հայերի մէջ, մասամբ՝

արեւելահայ որոշ ազգագաւառներում եւ հայկական մի շարք գաղթօջախներում 19րդ դարու Նոր տարին նշւում էր Յունուարի 1ին եւ բաւական կայունացած արարողակարգ ունէր: Սակայն մինչեւ 20րդ հարիւրամեակի սկիզբը արեւելահայ որոշ շրջաններում Նոր տարուն զուգահեռ, աւելի խանդավառ ու ջերմօրէն նշում էին Նաւասարդը՝ որպէս Նոր տարի, եւ Նաւասարդը նշող շրջաններում Յունուարի 1ին Նոր տարին նշելը սահմանափակւում էր ընդամէնը միմեանց շնորհաւորելով: Այնուամենայնիւ տօնակատարութիւնն արդէն կայունանում էր եւ նրանում ամրագրւում էին տարեմտին կամ Նոր տարուն բնորոշ սովորոյթները:
Տօնի անունները հայոց մեջ տարբեր էին: Յիշւում են Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալոնտար ձեւերը, Նոր տարուն նախորդող գիշերն էլ յայտնի էր Լոլէի գիշեր, Խլվլիկ, Կախ կամ Կաղ, Գօտեկախ անուններով, իսկ համշենահայերի մօտ՝ Ծաղկըմուտ: Այս բոլոր անուններն ունեն իրենց բացատրութիւնները: Նախ՝ Կաղանդ, Կաղինդ, Կալոնտար ձեւերը գործածուել են գլխաւորապէս արեւմտահայոց միջավայրում, յունական ազդեցութեամբ:
Արեւելահայոց մէջ առաւել տարածուած էին Նոր Տարի, Տարեմուտ ձեւերը: «Լոլէի գիշեր» անունը, թերեւս, գալիս է այն հանգամանքից, որ Նոր տարուան նախորդող օրը հայոց մեջ թխուող հացատեսակների շարքում՝ «փուռնիկ», «կլօճ» եւ այլն, յիշատակւում է նաեւ «լօլիկը»: Կախ կամ Կաղ բառերը բացատրւում են այդ գիշեր պահուստի թարմ մրգի «կախանները» տուն բերելու եւ առաստաղից կախելու, «գօտեկախը»՝ պատանեկան գիշերային շրջայցերի ժամանակ երդկից գօտիով գուլպաներ կամ զամբիւղներ կախելու եւ տօնական մթերքներ հաւաքելու սովորոյթով:
Նոյն կերպ որոշ տարբերութիւններ կային ծիսական սովորութիւնների կատարման ձեւերում, սակայն դրանք իրենց բովանդակութեամբ ընդհանուր էին:
Ամանորի սովորոյթները խմբաւորւում են հետեւեալ երեւոյթների շուրջ.
- բնակարանը, բնակավայրը եւ մարդու մարմինն ու հոգին մաքրելը, յարդարելը,
- ծիսական ուտեստը,
- ծիսական այցելութիւնները,
- գուշակութիւնները (անձնական, ընտանեկան, համայնքային, ազգային),
- յաջողութիւնն ապահովելուն միտուած եւ չարը կանխարգելող հմայական գործողութիւնները, խօսքերը, ծիսական մաղթանքները:

ՄԱՔՈՒՐ ՄԱՐՄՆՈՎ, ՄԱՔՈՒՐ ԽՂՃՈՎ

Նոր տարուայ տօնին նախապատրաստուելու ընթացքում բնակարանի մաքրութեանն առանձնակի կարեւորութիւն էր տրւում: Ոչ միայն մաքրւում էր բնակարանը, այլեւ հնարաւորինս դուրս էին նետւում անպէտք իրերը, նորոգւում էին տան, բնակարանի, ընտանիքում օգտագործուող աշխատանքային գործիքների քանդուած մասերը: Հանւում եւ մաքրւում էր ողջ ամանեղէնը, լուացւում էր ողջ սպիտակեղէնը: Բնակարանը ներ-ծծւում էր մաքրութեան բոյրով:
«Նոր տարուայ նախորդ օրերը շարուրցիների բոլոր երդիկներից անընդհատ ծուխ էր բարձրանում, օջախի վրայ անընդհատ ջուր էին եռացնում» (Շարուր):
«Տանտիկինը անպայման պէտք է մաքրէր ծխնելոյզը, նաեւ կրակարանին չորս կողմը» (Քեսապ):
«Տարեմուտի (Դեկտ. 31ին) ամէն մի տուն լուացք է անում» (Լոռի)
Բնակարանը յարդարւում էր, զարդարւում: Զարդարանքները ոչ միայն գեղագիտական էին, այլեւ՝ չարխափան կամ բարեբեր: Չարխափանների շարքում կարելի է յիշատակել չար աչքի դէմ կիրառուող նշանները, որոնք տեղադրւում էին ինչպէս մուտքի դռան վրայ, այնպէս էլ՝ պատերին: Բարեբեր իմաստն ունէր հասկերով կամ հասկերից պատրաստուած «ծառերով» զարդարանքները, որոնց վրայ նոյնպէս կախւում էին չարխափաններ: Գիւղական բնակարաններում, որոնց պատերն ու առաստաղը յաճախ սեւացած էին լինում օջախի մրից, ճերմակ ալիւրով աստղեր, լուսին ու արեւ էին պատկերում առաստաղին՝ «երկինք» ձեւաւորելով:
Ընտանիքի բոլոր անդամները լողանում էին եւ հագնում տօնական հագուստ, ցանկալի է՝ նոր հագուստ:
Շատ կարեւոր էր Նոր տարի մտնել «մաքուր խղճով»: Ջանում էին վերադարձնել պարտքերը, աւարտել կիսատ գործերը: Եթէ ընտանիքում գժտութիւն կար, աշխատում էին լուծել գժտութեան

առիթը, հաշտեցնել գժտուածներին: Նոյն կերպ գժտուածներին փորձում էին հաշտեցնել հասարակական միջավայրում:

ՈՒՏԵՍՏԸ

Սուտ կամ պասուց տոլմա

Նոր տարուայ գլխաւոր նախապատրաստութիւններն ուտելիքների շուրջն էին: Տօնի ժամանակ օգտագործուող ուտեստի տեսականին, դրանց ծիսական բնոյթը ընդհանուր առմամբ նոյնական էին հայոց շատ ազգագաւառների համար, սակայն երբեմն տարբերւում էին պատրաստման կերպով, մատուցման եւ ճաշակման ժամանակով, անուններով: Աշնանից սկսած այս տօնի համար պահած ունենում էին զանազան չորացրած մրգեր եւ թարմ մրգեր, պաստեղներ, ընկուզերշիկներ եւ այլն: Պէտք է յիշել, որ Յունուարի 1ը, ընկնելով հայոց ծննդեան տօնի շաբաթուայ մէջ, պաս օր էր, եւ ամանորեայ ուտելիքները բաղկացած էին պասին թոյլատրելի ուտելեղէնից:

Բուլանըխում «Նոր տարուայ կամ կաղանդի օրը, գիւղացի կինը սեղանի վրայ կը հանէ միայն պասաւուր կերակուրներ, որովհետեւ կաղանդը Ծննդեան պասի մէջ կը պատահի– կանէփով կամ ձեթով տօլմա, ձէթով փլաւ, խռուածք խօշապներ՝ ճիռըքէ, ծիրանէ, խախէ, եւ չամչէ դոցա պատրաստութիւնքը օր առաջ կը լինին: Իբրեւ կաղանդի նուէր՝ տանտիկինը մառանից կը հանէ չոր ծիրան, ընկոյզ, նուռ (չփտելու համար գետնի տակ թաղուած) կարմիր մըլթիկ խնձորներ եւ այլն»:

Լոբի

Դեկտեմբերի 30-31ին տանտիկինները ջանասիրաբար մաքրում էին լոբին, սիսեռը, ոսպը, բրինձը, ձաւարեղէնը, որոնք տարբեր կերակրատեսակների ձեւով պիտի զարդարէին տօնական սեղանը: Տարբեր տեղերում այդ ճաշատեսակները տարբեր էին, բայց շատերը ջանում էին դրանց թիւը

հասցնել եօթի: Ահա, օրինակ, ականատեսի նկարագրութիւնը Բալուի ամանորեայ ճաշատեսակների վերաբերեալ.
«ա) Պղլուր (ձաւար), աղընձած ու ծեծուած եւ խիւսի վերածուած շուշմայ (սուսամ), քիչ մը ծեծուած մանր կարմիր պղպեղ, բաւական շատկեկ ջարդուած սոխ, իրարու հետ խառնելով, կը լեցնեն զանոնք մինչեւ կէսը կամ քիչ մը աւելի ջուրով լեցուն պուտուկի մէջ, որուն կափարիչը վրան դնելով անոր բոլորտիքը կը ծեփեն խմորով ու կը դնեն թոնիրին մէջ որ եփի, ատոր կ՛ըսեն Խորու:
բ) Պղլուրով ու անոր երեք անգամ սիսեռով գրեթէ թօփիկի հար եւ նման գնդիկ կը շինեն:
գ) Անուշապուր, որուն նիւթերն են ծեծուած ցորեն, որ մաքրուած է իր թեփերէն, ընկոյզ, նուշ, չամիչ, մեղր կամ ռուպ, երբեմն գազպէ ալ կը դնեն, երբ զայն ունենան:
դ) Փերփեր-ապուր, ասոր ալ նիւթերը կը բաղկանան չորցուած փերփերէ, ծեծուած ցորենէ, կարմիր լոպիկէ (լուբիայի տեսակ մը), աղացուած ոսպ, չոր, բայց քիչ պղպեղէ, սոխէ եւ շուշմայի իւղէ:
ե) Պահոց քեշկեկ, աս՝ կը բաղկանայ ծեծուած ցորենէ, ոսպէ, սիսեռէ՝ չորցուած կանկարէ, աւելուկ ըսուած չոր բանջարէ եւ շուշմայի իւղէ:
զ) Շուշմայի հետ ասիկա զուտ ցորենի ալիւրի շաղուած խմոր մըն է զոր կը բանան խիստ բարակ ու կը տապկեն շուշմայի իւղին մէջ ու յետոյ անոնց ամէն մէկուն երկու երեսներուն վրայ կը լեցնեն կամ կը քսեն ռուպով կամ մեղրով շուշմային խիւսին հետ խառնուրդը, եւ կը շարեն զանոնք իրարու վրայ, որպէսզի կակուղ մնան եւ թէ աւելի անուշնան իրար ծծելով: Պէտք է գիտնալ, թէ այս բոլոր կերակուրները պահոց կերակուրներ են»:
Շատ ընդունուած էին ոսպից, սիսեռից սարքած քիւֆթան, ոսպից, սիսեռից, լոբուց, ձաւարեղենից ձեթով սարքած տոլման («սուտ տոլմա):
ՍՈՒՏ կամ ՊԱՍՈՒՅ ՏՈԼՄԱՅ – Ոսպը, սիսեռը, ձաւարը, լոբին առանձին-առանձին եփել, թողնել սառչի, խառնել, բոլորը միասին տապակել ձեթով սոխեռի մէջ, աւելացնել աղ, կարմիր ու սեւ պղպեղ, համեմի աղացած սերմ, ողջ զանգուածը թողնել սառչի: Սառելուց յետոյ ստացուած զանգուածը բաժանել հաւասար մասերի եւ մասերից իւրաքանչիւրը փաթաթել թթուեցրած կաղամբի թերթերով: Այնուհետեւ փաթաթած տոլման կրկին եփել կաթսայի մէջ: Մատուցում են սառը:
Բալուի կերակրատեսակների մէջ յիշատակուած անուշապուրի տեսակները, որ շատ տեղերում «Մայրամապուր. (Մարիամի ապուր) էր կոչւում, ինչպէս, օրինակ, ծեծած կորկոտով, չամիչով, չոր ծիրանով ու սալորով եփուած մայրամապուրը, որի մէջ եփելուց յետոյ դօշաբ են աւելացնում:
Արցախի, լոռու հայերի համար յատուկ նշանակութիւն ունէին լոբին եւ լոբաջրով պատրաստուած կերակրատեսակները: «Նոր տարին գալ չի առանց լոբու», ասում էին լոռեցիները:
Լոբին եփել, ջարդել կամ աղալ, խառնել աղացած ընկոյզի եւ ծեծած սխտորի հետ, համեմել համեմի եւ սամիթի աղացած սերմով, աւելացնել աղ, լաւ խառնած զանգուածը ձեռքի ափով ձեւաւորել այն ափսէի մէջ, որով մատուցուելու է, ձեւաւորել նռան հատիկներով կամ ընկոյզի կտրտած փշուրներով:
Շատ մեծ նշանակութիւն էր տրւում մրգերին: Չոր ու թարմ մրգերը չամիչի ու ընդեղէնների հետ կազմում են ամանորեայ ընթրիքի հիմնական բաղադրիչները: Որոշ տեղեր դարձեալ ջանում էին պահել «եօթ» թիւը՝ եօթ տեսակ թարմ միրգ (օրինակ՝ խնձոր, տանձ, սերկեւիլ, նուռ, խաղող, սեխ, զկեռ, արմաւ եւ այլն), եօթ տեսակ չրեղէն կամ չոր մրգեր (սալորի, ծիրանի, խնձորի, տանձի, թզի, խաղողի, թթի, արմաւի չրեր, զանազան չամիչներ, ունապ, փշատ եւ այլն), եօթ տեսակ պաստեղ (օրինակ՝ սալորի, ծիրանի, հոնի, մոշի, խաղողի, սերկեւիլի, արմաւի եւ այլն): Ահա թէ ինչպէս են նկարագրում ականատեսները Դիարբեքիրի հայերի Նոր տարուայ մրգեղէնի սեղանը. ««պրկիշը» (պղնձեայ կլոր սեղան) տաքուկ թոնիրին վրայ դրուած կ՛ըլլայ, լեցուն՝ քաղցրեղէններով, նպարեղէններով, բանդակներով եւ այլն), որոնց նշանաւորներն են ընկուզերշիկը, նշերշիկը, փստուղերշիկը: Անդեղտան ապակիի նման պաստեղը, նուռը, սերկեւիլը, արմաւը, սեխը, մեղրապոպը: Նաեւ պտուտակը, ունապը, փշատը եւ այլն: Փոքր սեղանի մի վրայ դրուած է նշանաւոր անուշէն հալուաները՝ ընկոյզէ, նուշէ, շուշմայէ, որոնց բոյրը եւ համը աննկարագրելի է»:
«Տանտիկինը ցորեկին կը պատրաստէ «մեզէին պրկիշը»: Սեղանին վրայ կը շարէ նուրբ պնակներ՝ ամէն տեսակ մեզեղէններով լի՝ շաքարեղէններ, նուշ, լեպլեպի, կուտեր, նարինջ, խնձոր, նուռ եւ այլն: Իրիկունը, արեւը մար մտնելէն վերջ, տան մեծաւորը կը բազմի թոնիրին ճակատը, շուրջը ունենալով ընտանիքին միւս անդամները: Հիմակ այս պրկիշը կը բերեն, կը դնեն թոնիրին վրայ. սեղանի երկու

կողմը կը վառուին խոշոր մոմերը, որոնք միշտ զոյգ ըլլալու են, կարմիր ու ճերմակ օղիի շիշերն ալ կը շարուին սեղանին շուրջը: Բոլորովին գիշեր ըլլալուն պէս, ընթրիքէն վերջ կը վերցուի մեզէի սեղանը, թոնիրի վրան կը մաքրուի, փոքրիկ մանչերն ու աղջիկները կ՚ելլեն կը նստին թոնիրին վրայ՝ անհամբեր սպասելով «Լօլէ»ին, որ ահա կը բերուի, եւ մեծ պրկիշ մը դարձեալ, լեցուն հետեւեալ կարգով՝ կարմիր չամիչ, սեւ չամիչ, ընկոյզ, նուշ, լեպլեպի, արմաւ, թուզ, սիճուգ, բոլորը իրարու վրայ լեցուած, որոնց ամէնուն վրայ կը կենան քանի մի ծալ պաստեղ:

Մանուկները կը սկսին երկու ձեռքով խառնել արդէն այս խառնուրդը, որուն կ՚ըսեն «լօլէն խառնել»: Լօլէն տակաւին կատարեալ չէ մանկան համար, մինչեւ որ չբերուի «չաթալ մոմը». ասիկա հաստ արմատ ունեցող եւ արմատէն քանի մը նախշուն ճիւղեր արձակող, յատկապէս Լօլէին համար պատրաստուած մոմ մըն է: Երեք «չաթալէն» սկսեալ՝ մինչեւ քառասուն «չաթալները» կան: Աւանդութիւն մը կայ, թէ ընտանիքը քանի անդամէ որ կը բաղկանայ՝ այնչափ պէտք է որ վառուած ըլլան մոմի ճիւղերը»: Քեսապում տանտիկինը «ամբարէն կը հանէր թուզի ընտիր տեսակները, չիրը, չամիչը, պաստեղը, «սուճուխ»ը, «մըլպի»ն, ընկոյզը, կը բովէր բեւեկ, թրջած ցորեն ու սիսեռ, կը խառնէր իրարու: Չոր մրգերն ու բովածը (կաւուրմու) կը դնէր ծեղէ ամաններու մէջ, ինչպէս նաեւ պահուած պտուղները՝ խնձոր, տանձ, նուռ, նարինջ, սերկեւիլ, աղամաթուզ: Ասոնք ճղիին ու գինիին հետ Նոր տարուան գիշերէն սկսեալ անպակաս կ՚ըլլային սեղանէն մինչեւ Ս. Ծնունդի երկրորդ շաբաթը»:

Մեծ կարեւորութիւն էր տրւում ընդեղէնին, յաճախ՝ դարձեալ եօթ տեսակ (օրինակ՝ ընկոյզ, պնդուկ, նուշ, պիստակ, ծիրանի կորիզի միջուկը, շագանակ, ձմերուկի կորիզ եւ այլն):

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԸՆԴԵՂԷՆԸ

Նոր տարուայ սիրուած անուշեղէններից էր նաեւ աղանձը՝ չամիչի, մաքրած ընկոյզի, նուշի ու բոված

կանեփի, երբեմն՝ բոված սիսեռի հետ խառնած, ինչպէս նաեւ Նոր նախիջեւանում «Կաղանդ» կոչուող անուշը: Վերջինս սպիտակելու աստիճան յարած մեղրի եւ կեղեւից մաքրած ու բոված ընկոյզի միջուկի խառնուրդն է:
ԱՂԱՆՁ- Կանեփը լուանալ, քամել, շուտ-շուտ խառնելով բովել թաւայում կամ ջեռոցում: Ցորենի հատիկները թրջել, թողնել մի քիչ փափկի, քամել, շուտ-շուտ խառնելով բովել թաւայում կամ ջեռոցում: Սառչելուց յետոյ խառնել միմեանց: Մատուցւում է սառը:
ԳՈՒՇԱԿՈՒԴԻՒՆՆԵՐ
«Տարին յաջող եւ ձմեռը կարճ կը լինի, եթէ կաղանդի կամ նոր տարուայ օրը Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը չընկնեն: Աւելի լաւ է, որ արիւն ցողէ քան անձրեւ նոր տարուց առաջ, որովհետեւ այդ նշան է՝ որ խիստ երկար ու սաստկաշունչ ձմեռ կ՚ունենան» (Բուլանըխ):
ՆՈՐ ՏԱՐՈՎ ՆՈՐ ԿԵԱՆՔ Է ՍԿՍԻՈՒՄ
Դեկտեմբերի 31ի տօնական նախապատրաստութիւնների առանցքը կազմում էին հացամթերքը եւ բազմաթիւ խմորեղէնները: Նախ՝ ամէնուր այդ օրը հաց էին թխում: Եթէ նոյնիսկ մեծ քանակութեամբ հաց ունենային, Նոր տարին պէտք էր նոր հացով սկսել: Նորոգում էին թթխմորը: Նոր տարուայ համար թխուող հացի ալիւրից մի քանի բուռ 8-10 տարեկան մի անմեղ աղջնակ շաղում էր՝ առանց թթխմոր խառնելու. այն պէտք է թողնուէր ինքնաբերաբար թթուելու եւ սկսուող տարուայ առաջին թթխմորը դառնալու: Այդ խմորից միայն մի փոքր կտոր ակշաթաթի վրայ եփում եւ ուտեցնում էին երեխաներին, որ նրանց փորը չցաւէր: Ապա թխւում էր տօնի կարեւորագոյն՝ «Տարի հաց», «Կրկենի», «Դօվլաթ կրկենի», «Կլօճ», «Փուռնիկ» եւ այլ անուններով յայտնի, ծիսական հացը: Տարբեր տեղերում այդ հացի բաղադրամասերը, ձեւը տարբեր էր: ՏԱՐԻՆ կարող էր լինել գաթա, բաղարջ, ձուաձեւ, կլոր, եռանկիւնի, խաչաձեւ եւ այլն՝ ըստ ճաշակի եւ ցանկութեան: Եթէ գաթա է, ապա միջուկը՝ խորիսը, մեղրով է շաղախւում, եւ առհասարակ այս գաթայի մէջ կաթ, մածուն, կարագ, իւղ չի գործածւում: Սրա իմաստը շատ պարզ է՝ հայոց Ամանորը պաս օր է: Ալաշկերտում ողջ խմորն է շաղախւում ընկոյզով, չամիչով, կանեփով: Սասունում, Տարի հացը կոչւում էր «փուռնիկ», խորիսը ընկոյզի միջուկ էր, բոված կանեփի հատիկ եւ քաղցր պաստեղ՝ միասին ծեծած: Գլխաւորն այն է, որ ՏԱՐԻ հացի մէջ որեւէ նշան էր դրւում՝ կորիզ կամ լոբի, աւելի յաճախ՝ դրամ: «Կաթան է Կաղանդի փառքն ու փայլը», գրում է քսաներորդ դարասկզբի հեղինակներից մէկը: Կաթայի խմորն, եթէ օրն է ուտիք, զի Աստուածայայտնութեան ու Զատկին եւս կաթա շինելու սովորութիւն կայ, կաթով կը շաղուի, իսկ եթէ պահքի օր է, որպէս Կաղանդինը, մեղրով կը շաղուի եւ կ՚ըսուի խորիս կամ խորիսխ: Կաթայի երեսին վրայ կը նկարուին տեսակ տեսակ կենդանիներու ձեւեր եւ շատ անգամ տաճարներու նկարներ: Կաթայի ձեւն է կլորակ, երբեմն խաչաձեւ, ձուաձեւ, եռանկիւնի կամ քառակուսի: Ունի փոսիկներ, որոնց մէջ երեխէք, մանկիկ տղեկներ ցորենի հատիկներ դնելով, կը պարեն եւ յետոյ տանիքներու վրայ դես ու դէն ձգելով կը սպասեն, որ թռչնիկնէր գան, կտցեն եւ ուտեն»:
ՏԱՐԻ ՀԱՑ

«Նոր Նախիջեւանում «Տարին», որ տարուայ իսկական նշանն է, մի մեծ բոլորշի եւ տափարակ հաց է, որ այնպէս է շինուած, որ վերան պարզ կերպով երեւում են մի քանի մասեր կամ ճիւղաւորութիւններ: Այդ մասերի կամ ճիւղերի թիւը լինում է կամ 12 հատ տարուայ 12 ամիսների թուով, կամ տան մէջ

եղած անդամների թուին համեմատ։ Հին ժամանակները սովորութիւն է եղել ընկուզով, չամիչով եւ զանազան նկարներով զարդարելու այդ հացի երեսը եւ, ինչպէս Տաճկահայաստանի շատ տեղերում մինչեւ ցայսօր էլ անում են– վերան թուականը գրելու, բայց այդ սովորութիւնը ներկայումս վերացել է եւ մնացել է միայն, այն էլ մի քանի ընտանիքների մէջ, չամչով եւ ընկուզով զարդարելու սովորութիւնը։ Տարի–ի մասերից մէկի մէջ դրուում է մի արծաթ դրամ իբրեւ բաղդափորձում։ «Տարին» կտրում ու բաժանում են ընտանեաց անդամներին կամ նոյն իսկ կաղանդի գիշերը, կամ երրորդ օրը, կամ ծննդեան ճրագալոյցին եւ կամ, վերջապէս, Յունուարի վեցին, տնօրհնէքից յետոյ»։ «Գաթան» ալիւրից ու ջրից շաղախուած ու փոքրիկ, կլորիկ, ուռուցիկ ձեւով շինուած խմորեղէն է, որի մէջ դրւում է ընկուզից ու մեղրից պատրաստուած խորիսխ»։

Տարբեր տեղերում ՏԱՐԻՆ տարբեր օր են կտրում՝ տարեմտի ընթրիքին, Յունուարի 1ի առաւօտեան, Յունուարի 4ին, Յունուարի 5ին՝ ճրագալուծին, Յունուարի 6ին՝ Ծննդին։ Սասունում աշխատում էին թխել այնպէս, որ կէսգիշէր չեղած կտրէին։ æաւախքում Նոր տարուայ արշալոյսը բացուելու հետ, տանտիկինները «ՏԱՐԻՆ» դնում էին սկուտեղի մէջ, վրան հաստ շերտով մեղր քսում, դուրս գալիս տնից, դառնում դէպի արեւելք եւ երեք անգամ ասում. «Դօվլաթ, սարն էս, ձորն էս, արի տուն»։ Ապա տուն էին մտնում, վրայի մեղրը բոլորին բաժանում, որպէսզի տարին անուշութիւնով անց կացնեն, իսկ «ՏԱՐԻՆ» պահում՝ Յունուարի 4ին կտրելու համար։ Շիրակում պառաւը տարին գրկում էր, տանում երդիկի շուրջը երեք անգամ պտոյտ տալիս եւ այնտեղից գցում քուրսու վրայ։ ՏԱՐԻՆ կտրում էին տան բոլոր անդամների թուին հաւասար, յաճախ բաժին հանելով նաեւ տան կենդանիներին, արտին, հանդին. Ում բաժնի միջից դուրս գար այդ նշանը, այդ տարի նա երջանիկ կը լինէր կամ ընտանիքի յաջողութիւնը նրանից կը գար։ Ծիսական հացի միջի նշանը նշանի տէրը պահում էր ողջ տարին։ Եթէ կտրելիս դանակը դէմ էր առնում նշանին, նշանակում էր տարուայ առատութիւնը գութանից, այսինքն՝ երկրագործութիւնից կը գար։ Ոմանք կտրում էին տասներկու մասի եւ գուշակում, թէ տարուայ առատութիւնը կամ բարեբախտութիւնը ո՞ր ամսից կը գայ։

ՏԱՐԻ հացից բացի, թխում էին զանազան ձեւերի ու մեծութեան այլ խմորեղէններ, որոնք ունէին կանխատեսելու նպատակ, ինչպէս նաեւ՝ հմայական խմորեղէններ: Առհասարակ ամանորեայ ուտելիքներն ունէին մի քանի միտում, որոնք կարելի է խմբաւորել հետեւեալ կերպ.
Հմայող-յաջողութիւն ապահովող,
Գուշակութիւնների համար,
Չարը կանխարգելող,
Հմայող-յաջողութիւն ապահովող ուտելիքներից էին, օրինակ, բոլոր տեսակի հատիկները՝ ձաւարեղէնը, ցորենը եւ այլն, որոնց առատ օգտագործումը նախնական պատկերացումներում պիտի ապահովէր կեանքի յարատեւութիւնը, մշտնջենականութիւնը: Որոշ պայմանականութեամբ այդ շարքին կարելի է դասել նաեւ խմորեղէնը, նոր թխուող հացը, որոնք նպատակ ունէին նաեւ տարուայ առատութիւնն ապահովելու: Նոյն իմաստն ունէր ընդեղէնների առատ օգտագործումը: Մրգերի որոշ տեսակներ հայոց մէջ, ինչպէս յայտնի է, յատուկ խորհուրդ ունեն: Դրանցից մասնաւոր տեղ են զբաղեցնում խնձորը եւ նուռը: Խնձորը, որի բեղմնաւորման եւ առատացման զօրութեան մասին պատկերացումները խիստ տարածուած են (յիշիր հեքիաթներում «անպտուղ»՝ անժառանգ թագաւորին ու թագուհուն բեղմնաւորող խնձորի մասին պատմութիւնները, հարսանիքներում խնձորի օգտագործման իրավիճակները՝ ընդհուպ մինչեւ հարսի կուսութեան վկայութիւն հանդիսացող «կարմիր խնձորը», խնձորի գործածութեան ձեւերը սիրոյ խոստովանութեան դէպքերում, նշանադրութեան ժամանակ, երբ նորահարսի նշանի մատանին մատուցում են մի խնձորի մէջ խրած եւ այլն), ոչ միայն Նոր տարուայ մրգեղէնի անբաժանելի մասն է, այլեւ պարտադիր է այդ օրուայ նուիրատուութիւններում, իսկ երբեմն՝ նաեւ գուշակութիւններում: Օրինակ, Պոնտոսի հայերը Տարի հացի փոխարէն տարուայ «բախտաւորութեան նշանը» խրում են խնձորի մէջ: Յաջորդ առաւօտեան ընտանիքի անդամների թուով խնձորներ էին դնում սկուտեղի մէջ, այդ թւում՝ նշանը պարունակող խնձորը, եւ առաջարկում բոլորին մէկական խնձոր վերցնել՝ ստուգելու համար, թէ ո՞ւմ բաժին կ՛ընկնի «բախտի խնձորը»: Երջանիկին բոլորը աղմուկով եւ ուրախութեամբ շնորհաւորում են ի սրտէ:
Գուշակութիւններ անելու նպատակով թխում էին նաեւ կլոր, մէջը ծակ, ցորենով ու գարիով զարդարուած «հացի հօր» «գարու հօր» կոչուող խմորեղէնները: Գիւղերում թխում էին «եզան պտուկներ», «արօր», «գութան», «խնոցի», քաղաքներում՝ ընտանիքի եկամուտը խորհրդանշող աշխատանքային գործիքի պատկերով խմորեղէն, ինչպէս՝ «մկրատ», «մատնոց», «ուրագ», «քսակ» եւ այլն:
Նոր Նախիջեւանում թխում էին ««Սամսայ»՝ միայն ալիւրից ու ջրից շաղախուած եռանկիւնաձեւ կարկանդակ, որի մէջ դրւում է սոխ ու չամիչ: «Խալաջը», որ պատրաստում են միայն գիւղացիները, կիսալուսնաձեւ, կամ կլորակ, մէջը ծակ հաց է, զարդարուած զանազան հիւսուածքով ու օրինակներով, իսկ մազի հիւսերը, քսակները, կուրծքերը, ցորենի հորերը եւ սմբակները, որոնցից

առաջինը եւ երկրորդը գլխաւորապէս պատրաստում են քաղաքացիները, իսկ միւսները միայն գիւղացիները, նոյն առարկաների ձեւով, շինուած խմորեղէններ են, որոնք արտայայտում են ժողովրդի պէս–պէս բաղձանքները՝ որ տան մէջ գտնուած աղջիկների մազերն երկար լինեն, տղամարդկանց քսակները լիքը փողով, կովերն առատ կաթ տան, անասուններն առողջ լինին եւ ցորենի հորերը լիքը ցորենով»:

Դրանց թխուելու ձեւով (հաստ, ուռած կամ սմքած) գուշակում էին այդ խորհրդանիշերի իրական կրողների տուեալ տարուայ վիճակը: Այսինքն՝ «հացի հորի» ուռչելը նշանակում էր հացառատ տարի, «խնոցու» ուռչելը՝ կաթնառատ տարի, «քսակի» ուռչելը՝ դրամառատ եւ այլն: Նոյն տրամաբանութեամբ իւրաքանչիւր մարդ կարող է թխել այն առարկայի խորհրդանիշը, որի վերաբերեալ ուզում է գուշակութիւն անել: Լոռիում «Երբ հացը թխում, աւարտում են, վերջի երեք գունտի վրայ նշաններ են անում, յատկացնելով մինը ցորենի, երկրորդը՝ գարու եւ երրորդը հաճարի նոր տարուայ բերքին եւ ձգում թոնրի մէջ, կրակի վրայ, ապա հանում են նայելով թէ որը որչափ է ուռել, բերքի առատութեան վերաբերութեամբ գուշակութիւններ անում»:
Գուշակութիւններ անելու նպատակով շատ տեղերում թխում էին նաեւ մարդակերպ ու կենդանակերպ թխուածքներ՝ ընտանիքի անդամների թուի համեմատ, եւ տան կենդանիների տեսակներից՝ մէկական (եզան, կովի, ոչխարի եւ այլն):
Մարդակերպ խմորեղէնները Լոռիում կոչւում էին Ասիլ-Բասիլ, Գանձակում՝ Վասիլ: Մարդակերպ հացիկները պատրաստում էին՝ աչքերի, բերանի եւ կրծքին դրած ձեռքերի վրայ չամիչներ խրելով: Թխուելու ընթացքում դրանց ուռելը կամ սմքելը համապատասխանաբար դրական կամ բացասական գուշակութիւն էր տուեալ տարուայ համար: Օրինակ, եթէ կնոջը ներկայացնող խմորեղէնի որովայնը թխելիս ուռչում էր՝ ընտանիքում նոր երեխայ պիտի ծնուէր:
«Երբ հացը թխում, աւարտում են, վերջի երեք գունտի վրայ նշաններ են անում, յատկացնելով մինը ցորենի, երկրորդը՝ գարու եւ երրորդը հաճարի նոր տարուայ բերքին եւ ձգում թոնրի մէջ, կրակի վրայ, ապա հանում են նայելով թէ որը որչափ է ուռել, բերքի առատութէան վերաբերութեամբ գուշակութիւններ անում» (Լոռի):

ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼ, ՉԱՐԻՔԸ՝ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼ ՀՄԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Որոշ խմորեղէններ ունէին միաժամանակ յաջողութիւն ապահովող եւ չարը կանխարգելող խորհուրդ: Օրինակ, թիֆլիսահայերը սովորութիւն ունէին, ի թիւս տօնական այլ խմորեղէնների, թխել նաեւ երկու հաց, որոնցից մէկը կոչւում էր «Էգ», միւսը՝ «Չիք»: «Էգը» ողջ տարին պահում էին ալիւրի մէջ, որպէսզի ալիւրը առատանար, «Չիքը» գցում էին հոսող ջուրը, որ չարիքը, «չկան» անցնող ջրի նման չքանան: Սեբաստիայում Նոր տարուն թխում էին «կայծակի հաց», վստահ, որ այն ուտելուց յետոյ կայծակնահար չէին լինի: Նոյն Սեբաստիայում ամանորեայ հացիկներից պահում էին մինչեւ գարուն

եւ, եթէ գարունը չորային էր լինում, երեք անգամ թրջելով կտոր-կտոր թափում էին որեւէ այրու երդիկից, որպէսզի անձրեւ գար: Բութանիայում, Պոլսում այդ օրուայ խմորեղէններից պահում էին մինչեւ Տեառնընդառաջ, այդ օրը չորացած հացը կոտրում եւ ուտում էին՝ որպէս ատամնացաւը կանխող միջոց:
Թխում էին կլոր, մէջը ծակ խմորեղէններ, որ «կլկալ» էր կոչւում: Կենդանիների, թռչունների անունով թխուած խմորեղէնները («կովի պտուկը», կամ «ոչխարի պճեղը») տրւում էին ուտելու հէնց կովին, ոչխարին: Տրւում էին նրանց, ինչպէս ստորեւ կը տեսնենք, Նոր տարուայ նոր, հոսող ջրում օծելուց յետոյ:
Ուտելիքների միջոցով չարը կանխարգելող սովորութիւններից էր նաեւ, ինչպէս ասուեց, առաջին թթխմորից մի փոքր կտոր թխելով երեխաներին ուտեցնելը, որ նրանց փորը չցաւէր: Չարը կանխարգելելու նպատակով ընդեղէնները ջարդւում էին միայն Դեկտեմբերի վերջին օրուայ գիշերը. Յունուարի մէկից յետոյ մինչեւ Ծննդեան տօները այլեւս ջարդել չէր կարելի, այլապէս գութանը կը վնասուէր: Առհասարակ Յունուարի մէկից մինչեւ Ծնունդ որեւէ բան ջարդելը չարագուշակ նշան էր: Այսօր դժուար է Նոր տարին պատկերացնել առանց տօնածառի: Այս համատարած երեւոյթի ուշագրաւ դրսեւորումներ հանդիպում ենք նաեւ որոշ հայկական խմբերի սովորութիւններում: Օրինակ, Պոնտոսի հայերի մէջ ընդունուած էր Նոր տարուայ երեկոյեան ձիթենու համեմատաբար հաստ մի ճիւղ խրել նախապէս թխուած մեծ հացի կամ բաղարջի մէջ: Այդ ճիւղը «Կաղանդի ծառ» էր կոչւում: Տնեցիներից իւրաքանչիւրը «Կաղանդի ծառից» կտրում էր փոքր ոստ եւ ինքն իր լուսաւոր ճակատագիրն ապահովելու նպատակով զարդարում ընկուզեղէնով: Առաւօտեան տանտէրը հաստ ճիւղը տանում էր եկեղեցի, քահանային օրհնել տալիս, յետ բերում տուն, տան անդամներից իւրաքանիւրի մազերից մէկ-մէկ մազ հանում, փաթաթում ճիւղին եւ այն ամրացնում գերանին:

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԽՆՋՈՅՔԸ

Նոր տարուայ տօնական խնջոյքը փաստացի սկսւում էր Դեկտեմբերի 31ի ընթրիքով: Սակայն այդ երեկոյ տեղի էր ունենում ընտանեկան խնջոյքը. այցելութիւնները պէտք է սկսուէին յաջորդ օրը՝ Յունուարի 1ին: Ընթրիքին ընտանիքի բոլոր անդամների ներկայութիւնը պարտադիր էր: Միայն նշանուած աղջիկներն իրենց նշանածներին մետաքսեայ գոյնզգոյն թելերով փնջած խնձոր էին ուղարկում եւ նրանցից նոյնպէս խնձոր էին ստանում՝ մէջը արծաթեայ տաս կոպեկանոցներ խրած: Որոշ վայրերում, սակայն, տօնական այցելութիւններն սկսւում էին հէնց այդ երեկոյ, ինչպէս, օրինակ, Քեսապում, ուր «Նոր Տարուան գիշերը մօտիկ ազգականներ ու դրացիներ, մեծ ու պզտիկ, իրարու

կ՛այցելէին: Ոչ ոք տունը կը պարպէր կամ ճրագը կը մարէր: Կէս գիշերին կը հնչէր եկեղեցւոյ կոչնակը, կ՛որոտային հրացանները: Գիւղացիք դուռը կը բանային, հին տարուան չարքերը դուրս դնելու եւ Նոր Տարուան բարիքները ընդունելու համար, ապա կարգով կը շնորհաւորէին իրարու Նոր Տարինե: Տան աւագագոյն անդամը բարձրացնում էր առաջին բաժակը, օրհնում սեղանը, շնորհաւորում տնեցիների եւ ընտանիքի Նոր տարին եւ առաջարկում բոլորին՝ առաջին բաժակի հետ մեղր համտեսել. «Անոյշ մեղր ուտենք, որ տարին բոլոր անուշ զրուցենք, անուշ լսենք, անուշ վարուենք»: Ընթրիքն սկսելուց առաջ տան գլխաւորը երեք բուռ կաղին, ընկոյզ էր նետում դէպի տանիք «Շէն կենայ Կալանտար, բարով Կալանտար ըլլայ» խօսքերով, վստահ, որ նետուած այդ կաղին-ընկոյզը առաջիկայ տարուայ առատութիւնը պիտի ապահովի: Ընթրիքին յաջորդում էր աղանդերի ճաշակումը, որ, ինչպէս տեսանք, բաղկացած էր թարմ ու չոր մրգերից, խմորեղէններից, ընդեղէններից, հալուաներից, իսկ քիչ թէ շատ ունեւորները նաեւ «գոգինախ են պատրաստում մեղրով ընկոյզից եւ նուշից»:

ՄԱՂԹԱՆՔՆԵՐԸ

Նոր տարուայ աւանդական համահայկական սովորութիւններից կարելի է առանձնացնել նախորդ օրն ու գիշերը 10-12 տարեկան տղաների, իսկ որոշ տեղեր նաեւ՝ աղջնակների խմբերի, ծիսական շրջայցերը եւ տօնը շնորհաւորելու աւանդոյթը: Խմբերը պարելով շրջում էին փողոցներում եւ որեւէ մէկի տանը մօտենալիս սկսում էին երգել: Սովորաբար շնորհաւորում էին երգելով: Երգերի տեքստերը պարունակում

էին բարեմաղթութիւններ, ընտանիքի անդամների գովք եւ տօնական ճաշատեսակների խնդրանք: Մինչ տներում զբաղուած էին տօնական պատրաստութիւններով, տղաները երգելով տուն էին մտնում կամ երդիկից դատարկ տոպրակ իջեցնելով՝ աւետում հին տարուայ աւարտը, Նոր տարուայ գալուստը: Չնայած բովանդակային մեծ ընդհանրութեանը, այդ երգերը շատ էին տարբերւում: Նախ դրանցից իւրաքանչիւրը կատարւում էր տեղական բարբառով, երգերում յիշատակուող ուտելիքների թուարկումից, ըստ էութեան, կարելի է պատկերացնել տուեալ տեղանքի Նոր տարուայ անհրաժեշտ մթերքների առարկայական ցանկը, ապահով, բարեկեցիկ կեանքի վերաբերեալ տեղական պատկերացումները եւ այլն: Բերենք մի քանի օրինակ.

Կըտէր հողը խնգան փոշի
Ծոցը վրեն ծալած ոսկի,
Դուռը վըրեն փերթ ըրեքնակ,
Կըտէր վրան բոլոր լիսնակ,

Տան սները կերոններ,
Ոսկէ կամար գերաններ:
Բարի րիգհուն ալելուիա,
Աշեն, հաշեն, էս տունը՝ շէն,
Սին ու գերան՝ սողոմաշէն,
Տուն աւլողներ՝ ջուխտ աղունակ,
Ձեռնաւելը՝ փունջ մանուշակ,
Թորոնները խորաննի են,
Հացթուխները՝ խանում խաթուն,
Էս տանը կայ երկու լիզու,
Մինը՝ բարի, մինը՝ չարի,
Չարինը՝ ընդի, բարինը՝ ըստի,
Բարին վեր գայ, ձեզ հետ նստի,
Բարով թող գայ ձեր նոր տարի,
Մուրազներուդ զիմ կատարի,
Ձեր տուն մտնու հազար բարի,
Աճար, ցորեն, կորեկ, գարի,
Լիքը հորեր շատ ունենաք,
Կարմիր օրեր շատ ունենաք,
Կարմիր օրով, կարմիր շորով,
Ուրախ կենաք միշտ կուշտ փորով:

ԼՈՌԻ

Այսպիսով, Լոռիում Նոր տարուն մաղթում էին «չարի անհետացում, բարու գալուստ», «մուրազների կատարում», «լիքը հորեր՝ աճարի, ցորենի, կորեկի, գարու», «կարմիր օրեր», «կարմիր՝ նոր շորեր», «կուշտ փոր»… իսկ «տունը շէն է», տան աղջիկները (աւլողները) աղաւնի են, տան տիկնայք՝ (հացթուխները)՝ խանում-խաթուն, տունն ինքն ամբողջովին հրաշք է. նրա թոնիրը խորան է, կտուրի հողը՝ խունկ, ոսկի, շրջապատուած արեւով ու լուսնով, տան սիւները կերոններ են եւ այլն:
Ալիւրը, ցորենը, կորեկը, հաճարը մաղթում է ամէնուր.
Սարերի կարմիր լալեն եմ,
Բարով եկար,
Հազար բարի,
Իմ մոր մինուճար բալեն եմ,
Խէրով եկար,
Թազա տարի:
Թասը լցնեմ կարմիր գինով,
Բարով եկար,
Հազար բարի,
Փլաւ բերեմ ոսկէ սինով,
Խէրով եկար,
Թազա տարի:
Ամբարս լցնեմ բերք ու բարի,
Բարով եկար,
Հազար բարի,
Ալիւր, ցորեն, հաճար, գարի,
ԽԵրով եկար,
Թազա տարի:
ԷՋՄԻԱԾԻՆ

Այս մաղթանքներին շատ նման է Հիւսիսային Կովկասի Ղզլար քաղաքի հայկական համայնքի միջավայրում Նոր տարուն երգուող երգում հնչող բարեմաղթութիւնները: Կիլիկիահայերի մէջ երգուող երգերում հնչում է հնի ու նորի սահմանակէտում սպասելիքների ամբողջութիւնը, որում խտացած է ամէն ինչ. «թէ խելք, թէ կեանք, թէ մալ»: Իսկ ահա Նոր Նախիջեւանում՝ հայկական մէկ այլ գաղթօջախում, երգուող երգը շատ աւելի պարզ է. Նորը, Հարսը, Գալանտոսը եկել է՝ լրիւ նոր ու առատ, շալէ շապիկով ու կարմիր գօտիկով, եկել է որպէս Նոր տարի եւ համեստօրէն համաձայն է «մէկ աւուճին»:

Շնորհաւոր նոր տարի,
Ծեր տունը շէն իլի,
Պարով նոր հաքնէք,
Միշտ ուրախ իլէք:
Հացը բոլ իլի,
Աչքը կուշտ իլի,
Ծեզ էլ փայ իլի,
Մեզ էլ փայ իլի:
Նոր տարին ուրախ,
Ուտենք գոզինաղ,
Չամիչ, թաթարու,
Ունենք ստանալու:
Եմիշ ու գինի,
Միշտ էլ բոլ իլի,
Միշտ ուրախ ապրենք,
Մէ լաւ քեփ քաշենք:
Տունը շէն իլի,
Բարաքեաթ իլի,
Միշտ ջոմարդ իլէք
Մեզ էլ միշտ յիշէք:

ՂԶԼԱՐ

Ալելուիա, ալելուիա,
Հինը գնաց, նորը կու գայ,
Հինը ուրախ ճանապարհէք,
Նորի համար պատրաստեցէք
Դուռ, լուսամուտ բացէք,
Ինչ որ կամիք խնդրեցէք,
Թէ կեանք, թէ խելք, թէ մալ,
Ամէնքիդ մուրազն ալ
Կու տայ, միամիտ եղէք:
Աղաներ ու խաթուններ,
Ձեզ շնորհաւոր Նոր տարի,
Ապրիք շատ ու շատ տարի:

ԿԻԼԻԿԻԱ

Գալանտոս, տօս, տօս,
Գալանտոսը եկիլ է,
Դուռին տակը կայնիլ է,
Շիլայ շապիկ հագիլ է,
Կարմիր գօտի կապիլ է,
Մէկ աւուճին խայիլ է:
Գալանտոս, տօս, տօս,
Գալանտոսը եկել է,

Դուռին տակին կայնիլ է,
Շիլայ շապիկ հագիլ է,
Կարմիր գօտի կապիլ է,
Մէկ աւուձին խայիլ է:
ՆՈՐ ՆԱԽԻՋԵԻԱՆ
Բալուում երգուող տարբերակում անձնական ակնկալիքներն են.
Բարի եկար, Նոր տարի,
Տուր մեզի ցորեն, գարի,
լէ, լէ, լէ, լէ, ախ լէ, լէ,
Մեր փեթակն ալիր կ'ուզէ,
լէ, լէ, լէ լէ…
Տանտիկինը եղ կ՛ուզէ,
լէ, լէ, լէ, լէ…
Բուխերիկս մուխ կ՛ուզէ,
լէ, լէ, լէ, լէ…
Մեր օճախը փատ կ՛ուզէ,
լէ, լէ, լէ, լէ…
Եգուն (այգին) պաղջին պտուղ տուր
լէ, լէ, լէ, լէ…
Մեր աղջիկին փեսայ տուր,
լէ, լէ, լէ լէ…
Մեր տղային հարս մը տուր,
լէ, լէ, լէ, լէ…
Հիւրընտութիւն (հիւանդութիւն) թող չըլի,
լէ, լէ, լէ, լէ…
Քեսատութին (վաստակի նուազում) թող չըլի,
լէ, լէ, լէ, լէ…
Մէկ այլ երգում սպասելիքներն են տանտէրերից, այդ թւում «շարոց, պաստեղ, չիր, ճըմուռ, քաղցու, բաղարջ, բլիթ, գաթա…» եւ այլն.
Ասօր Կախ է, վաղն է Կաղանդ,
Կախանն եօ՞ր է, վաղն է Կաղանդ, ալելայ,
Շարոց, բաստեղ, չիր ու հեւէք,
Գոգնոց բացէք, գոգով տուէք, ալելայ:
Տուն ու երդիք լիք են շարքով,
Բարով կաղանդ, բարկարեւով, ալելայ,
Ճոլոտ մամում ճըմուռ, քաղցու,
æոջիկ պապուն բաղարջ, բլիթ, ալելայ:
Ժիժ-պիժերուս շարան-շարան,
Շարոց, բաստեղ, անոյշ կաթայ, ալելայ:
Գոգնոց բացէք, գոգով տուէք,
Ափով բաժնենք, ծափով ուտենք, ալելայ:
Լոյս է իջեր վեր գերեզմընին,
Ողորմիս ձեր լոյս մեռելին, ալելայ:
Գոգնոց բացէք. գոգով տուէք,
Ափով բաժնենք, ծափով վայլենք, ալելայ:
Նոր տարուն Վանում երգուող երգն իր մէջ խտացրել է ժողովրդական պատկերացումները, քրիստոնէական խորհրդանիշերը, կոն-կրէտ գիւղի անձանց, տուեալ ընտանիքի ակնկալիքները եւ ողջ «հայ ազգի ողջութեան» մաղթանքը: Օրինակ, Վանի Լեզք գիւղում.
Շնորհաւոր տօն ու տարին,

Նոր Կաղանդն եւ իւր բարին,
Պատ վեր խըման, խիմ վեր քարին,
Վէմ քարն ի Պօղոս Պետրոս
Բանլիս տուեց փրկիչ Յիսուս:
Տունը շէն, շէն շինական,
Իւղն ու բլիթ նստան, կերան,
Բասիլիոս անուն բարի,
Որ ազատեց խեն քրիստոնէն,
Տարին են տարին, օրն են օրէն:
Ձեր տունը շէն հետ արեւուն,
Արեւն էրկներ ձեր տղեքներուն,
Չարը զատանէր, բարին մօտենար:
Օղորմի աղին, ծառ տընկողին,
Լեզկայ ռես Բաղտոյին,
Գըզիր Խաչոյին, տան ճեռչին:
Ուտենք, խմենք անոյշ գինին,
Ասենք օղորմին, ողջութեն հայոց ազգին:
Խմբերը շրջում էին ամբողջ օրը, երբեմն՝ երկու-երեք օր, անդադրում աւետելով Նոր տարուայ գալուստը եւ տօնական, զուարթ համարձակութեամբ իրենց սպասելիքները թուարկում.
Աւետիս, աւետիս, աւետիս,
Հա՛յ, եկել է, եկել է,
Ով եկել է, գայլն եկել է,
Կարմիր կովեն իւղ կ՛ուզէ,
Կուտուզ յաւեն հաւկիթ կ՛ուզէ,
Աւետիս, աւետիս, աւետիս,
Աւետիս, աւետիս, աւետիս,
Իւղեն կը ռէ, մեղրեն կը ռէ, տանտիկին,
Սերեն բռնէ, մեղրեն կը ռէ, տանտիկին,
Քիչ մա՛լ իւղ հետդ բերես տանտիկին,
Սախըն մատըդ ալ հետ չկռես, տանտիկին,
Աւետիս, աւետիս, աւետիս:
ԲԱԲԵՐԴ
Աս օր Կաղ է, վաղը Կաղընտ,
Ձեր մեռելին հոգուն տուէք ուր գայ,
Տանտիկին, տանտիկին,
Էլի գնայ մարագն ի վար,
Կարճ բռնէ, էրկան կ՛ըյէ,
Կամացուկ ուր մատիկդ չկըյես:
Ով ուր տայ՝ շէն կենայ,
Ով ուր չիտայ՝ հաւուն տոտոզը չորնայ:
ԱԿՆ
Տանտիկինը կախուած տոպրակի մէջ դնում էր մրգեր, յատուկ այդ նպատակով թխուած խմորեղէն, ընդեղէն, չամիչ եւ այլն:
ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ՋՈՒՐԸ
Ընթրիքից յետոյ, կէսգիշերին երիտասարդները գնում էին թարմ, Նոր տարուայ սկզբի հետ նորոգուած ջուր բերելու: Շատ տեղերում աղբիւր՝ ջրի գնում էին ընտանիքի մի քանի անդամ՝ տարբեր նպատակներով: Առհասարակ այդ ժամին ջրին յատուկ զօրութիւն էր վերագրւում: Որոշ տեղեր համոզուած էին, որ ուղիղ կէսգիշերին, երբ հին տարին տեղը զիջում է նորին, գետի ջուրը մի պահ ոսկի է հոսում: Որոշ տեղեր մինչեւ



կէս գիշեր եօթ անգամ գնում էին մէկական կուժ ջուր բերում եւ իրար ետեւից շարում, մինչեւ կէսգիշերին՝ ութերորդ կժի ժամանակ յաջողեցնէին ջրի հետ հոսող ոսկին որսալ: Այս հաւատով առաջնորդուելով այս գիշերը ջուր չեն դուրս ածում:
Նոր Նախիջեւանում «Դեկտեմբերի 31ին գիշերը ճիշդ այն րոպէին, երբ Հին տարին անհետանում ու կորչում է յաւիտենականութեան մէջ եւ ծնում է նոր–տարին, գետերը եւ աղբիւրներն ոսկի են հոսում, ուստի եւ գիւղերում ամէն մէկն աշխատում է այդ ժամանակ ջրերի վերայ գտնուել, ջուր վերառնել, որ հարստութիւն տուն տանէ: Նոյն ժամանակ երեւում են եւ ահռելի «խոնջոլոզը», եւ «ժիւտը» (շըւոտ) եւ «Առամ–թառայիմը» եւ սկսում են շրջել մարդկանց մէջ ու զանազան փորձանքներ բերել նոցա գլխին, ուստի եւ ծնողները զգուշացնում են երեխաներին եւ չեն թողնում նոցա Նոր–տարի գիշերը դուրս գալ»:
Ջավախքում երիտասարդ տղաները երկաթէ շիշը եւ ակիշը ձի արած արշաւում էին դէպի գետը, նրա մէջ ցորեն ու գարի լցնում եւ սրբազան ջուրը տուն բերում: Երբեմն այդ ժամին բազմաթիւ մարդիկ շրջապատում էին աղբիւրը, ջերմօրէն աղօթում եւ ջրի շիթերին խառնում Նոր տարուայ բնորոշ խմորեղէնների կտորներ, գարու, ցորենի հատիկներ՝ ասելով.
-Քեզի կու տամ ցորեն, գարի,
Դուն այ ինձի տու բարի,
Շնորհաւոր Նոր տարի:
-Ջրին բարին, ջրին մորին,
Անդնդային թագաւորին,
Ջուր կաղնդե՞ր ես:
Այսպիսով շնորհաւորում էին ջրի Նոր տարին եւ միաժամանակ՝ միւս խմորեղէններից, ինչպէս նաեւ մի խուրձ խոտ թրջելով նորոգուած ջրով, ջանում քաղել նրա զօրութիւնը: æրի մէջ հատիկներ, հացիկներ գցելով՝ սովորաբար ասում էին.
Առ քեզի գարի,
Տուր մեզի բարի,
Առ քեզի քեօմուր (ածուխ),
Տուր մեզի Էօմիւր (կեանք),
Առ քեզի հատիկ,
Տուր մեզի Ջատիկ:

Տարբերակ
Առ գարի,
Տուր բարի,
Առ երկաթ,
Տուր դօվլաթ:
Տարբերակ
Առ քեզի գարի,
Տուր ինձի հազար բարի:
Ուշագրաւ է, որ ջրի հետ առնչուող սովորութիւններում ակնյայտ զգացւում է կանանց ու տղամարդկանց որոշ տարբերութիւններ: Ջրին շնորհաւորելու՝ «ջուրը կաղանդելու» սովորոյթը վերապահուած էր տարեց կանանց. նրանք էին ջրի մէջ հատիկներ ու հացի, խմորեղէնի կտորներ գցում, նրանք էին ասում հմայական, շնորհաւորական խօսքերը: Կէսգիշերին ջուրը կժերը լցնում էին տղաները, իսկ խոտի խրձերը ջրի տակ թրջում էին տղամարդիկ:
Այդ գիշեր ջրի տակ թրջած հացի մի քանի կտոր որոշ տեղեր ամբարի մէջ պահում էին մինչեւ տարուայ վերջ, որպէսզի հացը առատ լինէր: «Հացի հօր» կոչուող կլոր, ծակ թխուածքը կախում էին տան պատից: Գիշերը թրջուած խոտը, տան կենդանիների, երկրագործական գործիքների եւ այլ այս կարգի պատկերներով թխուած հացիկները, ջրում առաւօտեան թրջելուց յետոյ, ուտեցնում էին կենդանիներին: Որպէս կանոն ուտեցնելու, հիւրասիրելու այդ պահը ուղեկցւում էր բարեմաղթութիւններով: Օրինակ, Շապին Գարահիսարում թռչուններին Նոր տարուայ առաջին կերը տալիս երգում էին.
-Ճու, ճու, ճու, ձագուկներ, իմ սիրելի վառեկներ,
Մօտ եկէք տամ ձեզ հատիկ, որ տաք ինձի շատ հաւկիթ,
Ճու, ճու, ճու, ճու, թռչնիկներ, կարմիր, ճերմակ հաւուկներ,
Եկէք կաղնտեմ ձեզ ալ, տամ ձեզ հատիկ, ջուր զուլալ:
Նոյն ձեւով գոմում, անասուններին կերակրելիս.
-Եկէք, սիրուն բուչիկներ (հորթեր), սիրամ (մուգ կարմիր) ու կարմիր գոյներով,
Ձեզի ալ տամ հատիկ, կեր, որ կաղնդչէք եմ բերեր:
Դուք ալ ապրիք տարիներ, ձեր սիրական զաւակով,
Համբուրեմ ձեր ճակատներ, սիւլիւ՛ պուռմայ կոտոշներ:
Աւելորդ է ասել, որ տան ջրի բոլոր անօթները լցնում էին նորոգ ջրով:
Ջրի կէսգիշերային զօրութիւնը այնքան մեծ էր համարւում, որ ոմանք վստահ էին, որ այդ պահին հոսող ջուրը իր հետ կարող է տանել չքացնել դողերոցքով հիւանդի ցաւը: Ձմեռուայ այդ սառնամանիքին հիւանդներ կային, որ մերկանում էին եւ մի ակնթարթով մտնում գուռից հոսող ջրի տակ, ապա գրեթէ մերկ վազում նստում թթի ծառի վրայ: Ծառի տակից մէկը ձայն էր տալիս. «Ի՞նչ ես անում այդտեղ»: «Թութ եմ ուտում»,- պատասխանում էր հիւանդը: «Հիմա ու թութ, հիմա ու դող», գոչում էր ծառի տակինը եւ կացնով զօրաւոր հարուած հասցնում ծառի բնին: «Ի՞նչ ես անում», սարսափահար հարցնում էր «թութ ուտողը»: «Խփում եմ ու եթ» ձեռքիցս գայ՝ հոգիդ էլ կը հանեմ», սպառնում էր ծառի տակինը եւ իբրեւ թէ սարսափահար դողը անմիջապէս լքում էր հիւանդին:

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՅ ԿՐԱԿԸ

Հացից ու ջրից զատ նորոգւում էր նաեւ կրակը: Դեռեւս քսաներորդ դարասկզբին օջախն էր տաքացնում տունը, օջախի վրայ էին կերակուր պատրաստում: Օջախն առհասարակ տան սրբազան անկիւններից էր, եւ նրա հետ կապուած բազմաթիւ աւանդական սովորութիւններ ապահովում էին օջախի բարոյական ու առարկայական անձեռնմխելիութիւնը: Բայց Նոր տարուայ օջախն առանձնայատուկ էր, երբ նորոգւում էր



կրակը: Շատ տեղերում մի մեծ քօթուկ էին դնում օջախի մեջ՝ աստիճանաբար առաջ մղելու պայմանով այնպէս, որ մինչեւ Ծնունդ կրակն անմար մնար (Լոռի): Բոլոր դէպքերում անմար էր պահւում Նոր տարուայ գիշերուայ եւ յաջորդ օրուայ՝ Յունուարի 1ի օջախը: Աւելի ուշ, Ծննդեան երեկոյին վերցնում էին այդ քօթուկից մնացած խանձողները, տանում հանդերում թաղում, որ բերքը առատ լինի եւ կարկուտը չխփի, ինչպէս նաեւ պահում էին ու կարկուտի ժամանակ դուրս նետում, որ կարկուտը կտրուի: Տնեցիներից ով էլ այդ օրը տուն մտնէր, նոյնիսկ օրուայ ընթացքում մի քանի անգամ, անպայման հետը թէկուզ մի փայտ էր ներս բերում եւ դնում օջախը՝ մի տեսակ շնորհաւորելով տօնի առթիւ: Միայն տան մեծի բերած փայտի կտորը մի փոքր վառուելուց յետոյ հանում էին, կրակը հանգցնում եւ մոխրում թաղում: Այդպէս էին անում մինչեւ æրօրհնէք, որից յետոյ տանում էին թաղում արտի ծայրում, որ հունձն առատ լինի: Այդ օրերին օջախի կրակի պայծառութիւնն առհասարակ ապահովում էր ընտանիքի կեանքի պայծառութիւնն ու ջերմութիւնը տարուայ ընթացքում:

ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ ԵՆ

«Նոր տարու օրը ծնած երեխան «աղէկ պտուղ» է համարւում»:

Բազմապիսի գուշակութիւնները եւ հմայութիւնները, ինչպէս ասուեց, Նոր տարուայ տօնի բնորոշ, անբաժան մասն էին կազմում: Գիշերը, երբ տնեցիները նստում էին մոմի լոյսի ներքոյ եւ մոմի լոյսից պատերին գծագրւում էին ստուերները, այդ ստուերների ձեւերով, լուսաւորութեան ու դժգունութեան աստիճանով գուշակում էին դրանց տիրոջ լուսաւոր կամ մութ, անորոշ ապագան տուեալ տարուայ համար, ինչպէս, օրինակ, Նոր Նախիջեւանում. «Դեկտեմբերի 31ի երեկոյեան մինչեւ որ տան բոլոր անդամները չհաւաքուին, ճրագ չի վառւում տների մէջ: Երբոր տնեցիք հաւաքուում են, բոլորեքեան մտնում են մի սենեակ եւ մոմը վառելով, դնում են մէջտեղը, սեղանի վերայ: Ճրագի լոյսից, ի հարկէ, մարդկանց ստուերն ընկնում է պատերի վերայ եւ երեւում մէկին լուսաւոր, միւսինն աղօտ գծագրութեամբ: Դորանից զանազան գուշակութիւններ են անում, թէ ո՞վ Նոր–տարուայ ընթացքում

աւելի բաղդաւոր կը լինի եւ ո՞վ անբաղդ։ Որի որ ստուերը պարզ կերպով արտացոլուի պատի վերայ, նա էլ տարին յաջողութեամբ կ՝անցկացնէ, բաղդաւոր կը լինի, որինը, ընդհակառակը, խաւար ու աղօտ, նա փորձանքների կը հանդիպէ, որոնցից գուցէ եւ անվտանգ չկարողանայ դուրս գալ»։
Աղջիկները ձուն մաքուր լուանում էին, մի թասի մէջ ճերմակ ձուի կողքին դնում էին ածուխ ու հինա եւ գիշերը թողնում թոնրի շրթին։ Եթէ առաւօտեան ձուն կարմրած լինէր, ենթադրում էին, որ այն դնող աղջիկն այդ տարի կարմիր բախտի կ՝արժանանար, այսինքն՝ կ՝ամուսնանայ, սեւանալու դէպքում սեւ բախտ էր սպասւում, նոյնիսկ՝ կը մահանար։ Աղջիկների ճակատագրի գուշակութեան մէկ այլ ձեւ էր այն սովորութիւնը, երբ նրանք գիշերը երեք անգամ ալում էին թոնրի պատերը եւ այդ նոյն աւելը գիշերը դնում իրենց բարձի տակ։ Եթէ առաւօտեան աւելի ճիւղերից ոչ մէկը ջարդուած չէր լինում՝ լաւ ճակատագիր էր գուշակւում։
Նոր տարուայ գիշերը, լինելով նորոգուող կեանքի առաջին գիշերը, լաւ հնարաւորութիւն էր անցեալ տարուայ կուտակուած չարիքներից ազատուելու.
«Նոր տարուայ գիշերը Նոր Նախիջեւանցիները վախենում էին «խոնջոլոզների» եւ «Առայիմ-թառայիմ»ների երեւալուց։ Խոնջոլոզները տանիքներում, կտուրի տակ ապրող էակներ էին, պատռուած հագուստներով, որոնց ծուէններից երկաթէ գնդեր էին կախուած։ Եթէ նրանց յաջողւում էր որեւէ մէկին բռնել, նստում էին նրա վրայ եւ ճնշում իրենց ծանրութեան տակ։ Առայիմ-թառայիմները կարող էին մտնել հնոցների ծխնելոյզից եւ դուրս գալ վառարանի դռնից։ Առայիմ-թառայիմները պատկերացւում էին երկաթէ երկար եղունգներով, երկար ու սպիտակ մազ-մօրուքով։ Սրանք յիշեցնում են պարսկահայերի «խլվլիկը»։
Գուշակութիւնները շարունակւում էին նաեւ առաւօտեան։ Օրինակ, æաւախքում նոր տարուն տնից առաջին անգամ դուրս գալիս հայրը գոմ էր մտնում տնեցիների ուղեկցութեամբ, ձին քաշում գոմի մէջտեղը, եւ բոլորն անհամբեր սպասում էին, թէ ձին ինքնուրոյն ո՞ր ոտքը առաջինը կը բարձրացնի։ Աջը բարձրացնելը մեծ բարեբախտութիւն էր գուշակում, ձախը՝ ձախորդութիւն։ Նոյն æաւախքում Յունուարի 1ին առհասարակ «բախտ-փորձուկ» էր։ Երիտասարդ տղաներն ու աղջիկները նախորդ օրը թխուած «ղառղռի կլիկները»՝ կլոր, փոքրիկ հացիկները դնում էին կտուրներին կամ դէզերի վրայ եւ հետեւում, թէ դրանք կտցող ագռաւները ո՞ր կողմը կը թռչեն. այդ կողմից էլ սպասւում էր հարսնացուն կամ փեսացուն։ Կիպրոսի հայերը նոյն գուշակութիւնն անում էին եզան հետ. Յունուարի մէկի առաւօտեան տանտէրը գոմ է մտնում, լայնատերեւ թփով հարուածում պատերին, մսուրին, բոլոր ընտանի անասուններին, ապա երկու կլոր խմորեղէն հագցնում սիրելի եզան կոտոշներին, այդ խմորեղէններին երկու վառուող մոմ փակցնում եւ եզանը դէպի դուռը հրում. եթէ եզը դռան սեմը աջ կճղակով անցնի՝ բարի նշան է, եթէ ձախ՝ վատ, չարագուշակ։ Ուստի ամէն ջանք գործադրում են, որ եզը աջ կճղակով անցնի։
Յունուարի 1ի առաւօտեան շարունակւում էին նաեւ յաջողութիւնը, բարեկեցութիւնը ապահովող հմայութիւնները։ Նախ, այդ օրը խուսափում էին որեւէ մէկին փոխ տալ, յատկապէս՝ թթխմոր, դրամ, առհասարակ ծախս չէին անում։ Առաւօտեան տան դուռը առաջինը տան մեծն էր բացում, որպէսզի նա շատ տարիներ իր տանից անպակաս լինէր։ Առաւօտեան վաղ նոր բերած ջուրը հեղում էին տան անկիւններում՝ տան առատութիւնն ապահովելու համար, նոյն նպատակով եօթ տան աղբանոցից փայտի խշուրներ էին հաւաքում եւ գցում իրենց աղբանոցը, միմեանց նուէրներ էին տալիս, յատկապէս մեծերը՝ փոքրերին։ Վաղ առաւօտեան տան մեծը մատուցարանի մէջ շարում էր հաց, գինի, մեղր եւ չորս խնձոր, որոնց վրայ չորս մեղրամոմ էր վառուում։ Մատուցարանը տանելով տան չորս անկիւնները, նա ասում էր. «Անոյշ արէք, ովքեր չէք երեւում, շնորհաւոր նոր տարիէ։ Ապա դուրս էր գալիս եւ աղօթում Աստծուն, խնդրելով, որ ամբողջ տարին իր տան համար անցնի այնպէս քաղցրութիւնով, ինչպէս քաղցր է մատուցարանը, տուն մտնում, տան բոլոր անդամներին հրաւիրում ճաշակելու հացից ու մեղրից, ասելով՝ «էսպէս քաղցր պառաւես»։ Վերջապէս մեղրից խաչաձեւ քսում էր դռան ճակատին եւ վառած մեղրամոմի ծխով սեւացնում քսած տեղը, մի կարմիր շոր կապում եւ ներս մտնելով երեխաներին բաժանում նրանց համար թխուած խմորեղէնները։ Դրանից յետոյ, մինչ նա «կաղնդում» էր հաւերին, տան տղամարդը «կլկալներն» առած մտնում էր գոմ՝ նախապէս գոմի դռան վերեւը մեղրով խաչ քաշելով, գոմէշների աջ եղջիւրին մի-մի կլկալ անցկացնում, բերաններին մի քիչ մեղր քսում։

Առաւօտեան շարունակում էին հմայել-հեռացնել բոլոր չարիքները: Օրինակ, տան անդամներից մէկը բարձրանում էր տանիք եւ այնտեղ սկսում աղմուկ հանել, փայտով, կացնով, որեւէ սուր բանով: Ներքեւից մէկը հարցնում էր.
- Ի՞նչ ես անում:
- Մուկ եմ բռնել,-պատասխանում էր վերեւինը:
- Ո՞ւր պիտի ուղարկես:
- Ստամբուլ (պատասխանը պիտի պարունակէր որքան հնարաւոր է հեռու կամ թշնամի երկրի անուն, սակայն կարող էր «ուղարկուել» նաեւ մօտիկ թշնամի երկիր կամ նոյնիսկ որեւէ չսիրուած մարդու տուն):
Որոշ դադարից յետոյ վերսկսւում էր աղմուկը, կրկնւում էր հարցը.
- Ի՞նչ ես անում:
- Ցաւ եմ կտրում:
- Ու՞ր պիտի ուղարկես:
- Ինգլիզ (որքան անհասանելի է երկիրը, այնքան՝ լաւ):
Այս երկխօսութիւնը կարող էր շարունակուել այնքան, մինչեւ տան բոլոր առկայ եւ հնարաւոր դժբախտութիւնները, կարիքները, չարիքը ուղարկէին, հեռացնէին:
Յունուարի 1ին «տօնը դուրս էր գալիս ընտանքից»: Թէ այցելութիւնները, թէ բարեմաղթանքները, թէ հմայութիւններն այլեւս տարածւում էին համայնքի, հասարակութեան, ազգի, «արար աշխարհի» վրայ.
«Երբ առաւօտեան բարի լուս կը բացուի, տանտիկինն ու տան սպիտակ մուրուքը ժամ կ՛երթան եւ կը բարեմաղթեն արար աշխարքին խաղաղութիւն, շնորհաւոր տարի եւ բարի կաղանդ՝ դուռ դրկեցին, բարեկամին ու ազգականին, ճժուն ու երեխին, որդուն ու հարսինե (Բուլանըխ)։
Տան դուռը երբեք չէր փակւում: Փակ դուռը վատ էր թէ խորհրդանշական, թէ ուղիղ իմաստով: Բաց դուռը խորհրդանշում էր ինչպէս Նոր տարին ընդունելու, այնպէս էլ հիւր ընդունելու տանտէրերի պատրաստակամութիւնը: Առաւօտ շուտ կարող էին սկսուել այցելութիւնները: Բոլոր հիւրերը խիստ ցանկալի էին: Այցելում էին տոհմի մեծերին, ծնողներին, խնամիներին, հարեւաններին, քաւորին, գիւղապետին, քահանային: Նշանուած աղջկան «փայ» էին ուղարկում փեսացուի միջոցով: Սանամայրերն էր իրենց քաւորներին ընծայ են տանում կամ ուղարկում օղի, գինի, մրգեր, թխուածքներ, գուլպաներ եւ այլն։
«Նշանադրուած երիտասարդներն անշուշտ օղի, թխուածք եւ մրգեղէն առած գնում են աներանց տուն, համբուրում աներոջ եւ զոքանչի ձեռքերը, օղին տալիս աներոջը, թխուածքը՝ զոքանչին, իսկ մրգեղէնը հարսնացուին։ Վերջինս էլ շատ անգամ «փնջած խնձոր» է նուիրում իւր նշանածին, միայն ծածուկ. «Փնջած– խնձորը» պատրաստում է ինքը իւր ձեռքով մետաքսեայ գոյնզգոյն թելեր փաթաթելով մի կարմիր խնձորի վրայ. եւ զանազան կողմերում նոյն թելով փնջիկներ շինում։ Առատաձեռն նշանածը սրա փոխարէն ինքն էլ մի խնձոր է նուիրում՝ վերան արծաթեայ տասն կոպէկանոցներ խրած»:
Շնորհաւորելու գնացողները երբեք դատարկաձեռն տուն չէին մտնում, առնուազն մի խնձոր էին աւելացնում սեղանի բարիքներին՝ բարեկեցութեան եւ երկարակեցութեան մաղթանքներով: Թէ տնեցիները, թէ այցելուները տուն մտնում էին աջ ոտքը առաջինը մտցնելով, այլապէս ձախորդութիւններն անպակաս կը լինէին:
Շնորհաւորական այցելութիւնները սկսւում էին օրուայ առաջին կէսին եւ կարող էին շարունակուել ողջ օրուայ ընթացքում: Այցելուներին միշտ հիւրասիրում էին՝ ով/ովքեր էլ լինէին նրանք,-բարեկամ, հարեւան, ազգական, հարուստ կամ աղքատ, թշնամի մէկը կամ՝ այդպիսին ընկալուող մէկը: Բարեմաղթանքի խօսքերն ասւում էին անմիջապէս՝ տուն մտնելիս, եւ շարունակւում հիւրասիրութեան ընթացքում, թէ այցելուների, թէ տանտէրերի կողմից.
Շնորհաւորական եւ շնորհակալական մաղթանքներ

Յօդուածի հեղինակ Հրանուշ Խառադեան, ազգագրագէտ

«Սաղ ըլիք, ուրախութենի տարի ըլի. ցամաք աչքով, ուրախ սրտով ամէն տարի էս օրս հասնունք, ուրախութենով տարեմուտ ենք անում, ուրախութենով էլ սուրբ Յարութեանը արժանանանք, լի ու առատ տարի ըլի, Աստուած մահին թանգութիւն տայ, հացի էժանութիւն (Լոռի):

«Քու խմածն անուշ, բարի ես եկի, յանցկի հար եռդա (այնտեղից մինչեւ այստեղը) վըր իմ գլխուն ու երեսին Աստուած մարդութենից (բարեկամութիւնից) պակաս չենէ, յըմէն տարի արժանանանք իդա օրուան»:

Բարեմաղթանքներում, շնորհաւանքներում յաճախ էր հնչում հայ ժողովրդին, հայ ազգին, քրիստոնեաներին սատարող, «պաշտպանող» մաղթանքները.

Աստուած Լուսաւորչու ազգ չկորցու, մըր խղճուկ ազգին լուս ու ճար մէ էնէ, խնամի Պօղոս, աչքիս քաւոր Պետո, բարի ես եկէ, աչքիս, գլուխիս, շնաւոր նոր տարի, բարի կաղանդ, կենդանութեն յըմնուդ (ամենքիդ)»:

Այցելութիւնները, շնորհաւորանքները շարունակւում էին մինչեւ կէս գիշեր: Այնուհետեւ մինչեւ Ծննդեան տօները տներում սեղաններին միշտ պէտք է միրգ ու ընդեղէն լինէր, տան դուռը՝ բաց, գիշերները ճրագ վառուէր, տան կրակն ամենեւին չհանգչէր:

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԱՅՍՕՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՈՒՄ

Հայաստանի հանրապետութեան բնակչութեան այսօրուայ Նոր տարուայ տօնահանդէսը որոշ չափով «ժառանգել է» հարիւրամեայ վաղեմութեան աւանդոյթները, բայց այն նաեւ զգալիօրէն տարբերւում է: Նոր տարին շարունակում է «սահմանայինե լինել եւ, ըստ էութեան, իւրաքանչիւր Նոր տարուայ տօնահանդէս որոշ իմաստով «ջրբաժան է» անցեալի ու ապագայի միջեւ: Այն նաեւ «ներկայ» ունի:

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՈՐՊԷՍ ԱՆՑԵԱԼԻ ՈՒ ԱՊԱԳԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾ

Ամէն տարուայ վերջին ամիսը՝ Դեկտեմբերը տուեալ տարուայ արդիւնքը հանրագումարի բերող ամիսն է: Այն այդպիսին է թէ պետական կառոյցների, թէ մասնաւոր հիմնարկների, թէ ընտանիքների, թէ անհատների համար: Դեկտեմբերին աւարտւում են հիմնական հաշուետուութիւնները, ամփոփւում են տարուայ արդիւնքները: Եթէ դրանք պետական կառոյցների ամփոփումներն են, յաճախ հրատարակւում են թերթերում, ներկայացւում են հեռուստատեսութեամբ ու ռադիոյով:
Դեկտեմբերը յաճախ նաեւ շինարարական աշխատանքների աւարտի եւ շէնքերը շահագործման յանձնելու ամիսն է: Շատերը հենց Նոր տարուն են բնակարանամուտ տօնում՝ Նոր տարով նոր բնակարանում նոր կեանք սկսում:
Դեկտեմբերին ջանում են վերադարձնել պարտքերը, որպէսզի նոր տարին մաքուր սկսուի:
Գժտուածները փորձում են հաշտուել, որպէսզի Նոր տարի՝ «ապագայ» մուտք անեն հաշտուած:
Դադարում՝ «պաուզայ» է անում նոյնիսկ քաղաքական բանավէճը:
Դեկտեմբերի վերջին օրը հանրապետութեան առաջին դէմքերը հեռուստացոյցով շնորհաւորում են երկրի քաղաքացիներին, համառօտ ամփոփում անցած տարին, ներկայացնում ձեռքբերումները եւ խօսում յաջորդ տարուայ՝ մօտ ապագայի ծրագրերի մասին:
Դեկտեմբերին կազմւում են նաեւ յաջորդ տարուայ՝ մօտ «ապագայի» ծրագրերը:

ՆՈՐ ՏԱՐԻՆ ՆԵՐԿԱՆ Է, ԱՅՍՕՐԸ

Բուն Նոր տարուայ տօնի հանդիսութիւնները սկսւում են Դեկտեմբերի վերջին օրերը՝ աշխատավայրերում տեղի ունեցող հանդիսութիւններով: Դրանց ընթացքում մարդիկ շփւում են միմեանց հետ,
Այսօր Հայաստանում Նոր տարուայ առաջին եւ ամենակարեւոր խորհրդանիշը «տօնածառն է»՝ խաղալիքներով, կոնֆետներով զարդարուած:

ՆՈՐ ՏԱՐԻՆ ԱՅՍՕՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՈՒՄ

Ժամանակակից Նոր տարուայ տօնահանդէսը, սահմանային բաղադրիչներ ունենալով հանդերձ, մեծ չափով «ներկան» է: Տօնահանդէսը ամրագրում է հասարակական, ընտանեկան, ազգակցական, համայնքային ընթացիկ կապերը, վերահաստատում արժէքները, «ցուցադրում» հասարակական եւ մշակութային կեանքի նորամուծութիւնները, «հաստատում» եւ դրանով ինքնին ձեւաւորում նոր աւանդոյթները, ժողովրդական մշակոյթի արուեստի ոլորտի զարգացումները եւ այլն:
Նոր տարուայ տօնի «ազդարարը» Դեկտեմբերի սկզբներին փողոցներում, հրապարակներում յայտնուող «տօնածառերն» են՝ զարդարուած եղեւնիները:
Բուն Նոր տարուայ տօնի հանդիսութիւնները սկսւում են Դեկտեմբերի վերջին օրերը՝ կրթական հաստատութիւններում, աշխատավայրերում տեղի ունեցող հանդիսութիւններով: Դրանց ընթացքում մարդիկ միմեանց շնորհաւորում են սպասուող Նոր տարուայ առթիւ, բարեմաղթանքներ յղում երկրին, հայ ժողովրդին ու անձնական յաջողութիւններ ցանկանում միմեանց: Դպրոցներում տարրական դասարանների երեխաները նամակներ են գրում «Ձմեռ պապին», որ հեռաւոր հիւսիսից պիտի գայ Հայաստան եւ նուէրներ բաժանի երեխաներին:
Դեկտեմբեր ամսուայ վերջերին փողոցներում արդէն երեւում են երկար կարմիր վերարկուով, սպիտակ մորթէ կնգուղով կամ օձիքով, ճերմակ մօրուքով եւ նուէրների պարկով Ձմեռ պապերը:
Յաճախ նրանց ուղեկցում են ճերմակ կամ արծաթափայլ վերարկուով գեղեցկուհի ձիւնանուշիկները:
Այդ օրերին, յատկապէս քաղաքների դպրոցներում ու նախադպրոցական հաստատութիւններում, դահլիճում զարդարուած տօնածառի շուրջ կազմակերպուող Նոր տարուայ հանդէսների հիմնական դերակատարները երեխաներին բարի խրատներ տուող Ձմեռ պապերն ու երգ ու պարով զուարճացնող ձիւնանուշիկներն են: Հանդէսներին երեխաները յաճախ մասնակցում են դիմակներով:
Նոր տարուայ տօնահանդէսներն այսօր երբեմն շարունակում են խորհրդային տարիներին սկսուած «դիմակահանդէսային» ցերեկոյթների աւանդոյթները: Այդ օրերին մանկական թատրոնների, կինոդահլիճների սրահները նոյնպէս ներկայացնում են մանկական տօնական ծրագրեր: Ամէնուր հնչում է երգիչ Ռուբէն Հախվերդեանի «Նոր Տարի» երգը, որի մէջ խտացուած են Նոր տարուից երեխաների ակնկալիքները.
Պզտիկներ, շուտ հաւաքուէք,
Ու կլոր շրջան կազմէք,

Երգէք երգն այս ու պարէք,
Նոր տարին դիմաւորէք:
Կրկներգ
Նոր տարի է, Նոր տարի,
Գալդ թող լինի բարի:
Պայծառ ժպիտով արի,
Դու բարի մեր Նոր տարի,
Բոլորիս երազանքները
Այս տարի դու կատարի:
Կրկներգ
Նոր տարի է, Նոր տարի,
Գալդ թող լինի բարի:
Բեր անուշ կարկանդակներ,
Եւ ուրախ ու նոր խաղեր,
Բեր նուէր, յոյսեր ու սէր,
Մեր բարի, մեր լաւ ընկեր:
Կրկներգ
Նոր տարի է, Նոր տարի,
Գալդ թող լինի բարի:
Իսկ յետոյ կէսգիշերին,
Հիւր կը գայ Ձմեռ պապին,
Ու կ՚ասի նա բոլորին
Շնորհաւոր Ձեր Նոր տարին:
Կրկներգ
Նոր տարի է, Նոր տարի,
Գալդ թող լինի բարի:

Դեկտեմբերի վերջին տասնօրեակը քաղաքներում տօնական գնումների եռուզեռի օրեր են: Ոչ մի այլ տօն այսօրուայ Հայաստանում նախատօնական եռուզեռով, գնումներով չի կարող մրցակցել Նոր տարուայ հետ: Գնւում են սովորաբար մթերք, խմիչք, հագուստ, սպասք, խաղալիքներ, օծանելիք, յուշանուէրներ… Նոյն օրերին գիւղերում շատերը խոզ են մորթում: Նոր տարուայ նախօրէին խոզ մորթելը վեր է ածւում տղամարդկանց հաւաքների եւ նախատօնական ոչ մեծ խնջոյքների:

Նոյն օրերին, սովորաբար, ամբողջովին մաքրւում են բնակարանները: Դեկտեմբերի վերջին երկու օրերին բնակարաններում տեղադրւում է բնական, այսօր յաճախ նաեւ արհեստական, խաղալիքներով զարդարուած տօնածառ, հիւրասենեակը զարդարւում է փայլաթղթերով, գունազարդ փնջիկներով: Վերջին տարիներին տօնածառը սկսել է դուրս մղուել, դրան փոխարինում են պատին ամրացուող եղեւնու երկու-երեք ճիւղերը կամ եղեւնու ճիւղերը նմանակող արհեստական ճիւղերից օղակները: Դեկտեմբերի վերջին երկու-երեք օրերին, շատերը միմեանց շնորհաւորական բացիկներ են ուղարկում: Դրանցում սկսում են գերիշխել ելեկտրոնային տարբերակները: Վերջին տասնամեակում ազգային մշակութային ակունքներին վերադառնալու փնտռտուքը արտայայտւում է նաեւ բացիկների ձեւաւորումների վրայ. դրանցում գերիշխում են հայ էթնիկ ինքնութիւնը խորհրդանշող պատկերներ, զարդանախշեր, միջնադարեան մանրանկարչութեան նմուշներ, ինչպէս, օրինակ՝ սոյն պատկերները. Տարածւում են նաեւ մշակոյթների սինթեզ ներկայացնող պատկերները, օրինակ՝ Ռազմավարական հետազօտութիւնների «Արարատ» կենտրոնի ստորեւ ներկայացուող բացիկի վրայ Մասիս սարն է՝ հարաւ-արեւելեան խորհրդանիշերով:

Ինչպէս երեւում է բացիկի շնորհաւորական վրայի գրութիւնից, Հայաստանում Նոր Տարուայ եւ Սուրբ Ծննդեան տօները «միացել» են՝ «Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ»: Հայաստանի Տօների եւ յիշատակի օրերի մասին օրէնքում նոյնպէս այս տօները «միացել են», դրանք օրէնքում հանդէս են գալիս մի տողով եւ կոչւում են՝ «Ծննդեան տօներ եւ Ամանոր՝ նշւում են Դեկտեմբերի 31ից մինչեւ Յունուարի 6ը, ոչ աշխատանքային օրեր են Դեկտեմբերի 31ը, Յունուարի 1ը, 2ը (Ամանոր) եւ

Յունուարի 6ը (Սուրբ Ծնունդ եւ Յայտնութիւն)»: Չնայած հայոց Ծննդեան տօները ոչ թէ նախորդում, այլ յաջորդում են Ամանորին՝ Նոր տարուն, օրէնքում դրանց տեղերը փոխուել են: Արեւմտեան քրիստոնէութեան այս ազդեցութիւնը յաճախ արտացոլւում է նաեւ Ամանորեայ բացիկներում: Ստորեւ ներկայացուող բացիկի վրայ հայերէն լեզուով շնորհաւորանքում տօնանունների յաջորդականութիւնը համապատասխանում է հայկական տօների յաջորդականութեանը, իսկ անգլերէնը արտացոլում է արեւմտա-քրիստոնէական աւանդոյթը. յիշւում է նախ Ծննդեան, ապա՝ Նոր տարուայ տօնը: Ամանորեայ բացիկների ամենայաճախ հանդիպող պատկերը, սակայն, տօնածառն է կամ Ձմեռ պապը:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

Տարուայ վերջին օրը քաղաքների եւ գիւղերի մեծ մասի հրապարակներում, տօնածառների շուրջը կազմակերպւում են համայնքային տօնահանդէսներ՝ երաժշտութիւն, համերգ, պարեր: Երեւանում աւանդոյթ է դառնում այդ երեկոյ քաղաքապետարանի կողմից մատուցուող տորթի բաժանումը՝ տօնահանդէսի մասնակիցներին: Դրանց մասնակցում են հիմնականում երիտասարդները: Նոր տարին, սակայն, ընդունուած է դիմաւորել ընտանիքներով, ուստի ուշ երեկոյեան շտապում են վերադառնալ տուն, որտեղ արդէն պատրաստ է ընթրիքի տօնական սեղանը:

ՈՒՏԵՍՏԸ

Դեկտեմբերի վերջին օրը կանայք զբաղւում են տօնական խնջոյքի նախապատրաստութիւններով՝ եփել, խմորեղէններ թխել, զանազան սառը խորտիկներ պատրաստել: Դրանց մեծ մասի ծիսական իմաստը կորել է, սակայն «վերադառնում է» Տարի հացի աւանդոյթը: Աւանդական մշակութային արժէքներ փնտռող մեր հասարակութիւնում վերսկսուել է նաեւ ամանորեայ մարդուկներ թխելու եւ դրանցով գուշակութիւններ անելու սովորոյթը: Թխում են ընտանիքի բոլոր անդամների թուով՝ տղամարդակերպ, կանացիակերպ, մանկական:

Դժուար է այս ծիսական հացիկները «տեղաւորել» տօնական ուտեստի մէջ: Դրանք չեն ուտում, շատերը պահում են մինչեւ յաջորդ Նոր տարի: Ոմանք նախորդ տարուայ այս հացիկները Դեկտեմբերի վերջին փշրում են հոսող ջրի տակ եւ այն «անցնում գնում է հին տարուայ հետ»: Անցեալից վերադարձող այս նորամուծութիւնները բնորոշ են քաղաքային կեանքին: Գիւղերում աւելի շարունակւում է տօնահանդէսի խորհրդային կաղապարը, չնայած այստեղ նոյնպէս զգալի փոփոխութիւններ կան:

Այսօրուայ տօնական խմորեղէններում զուգահեռւում են աւանդական գաթան, փախլաւան տարաշխարհիկ անուններով («նապոլէոն», «մրջնաբոյն», «ծտի կաթ», «միկադօ», «սիգարետ», «էկլեր» եւ այլն) ժամանակակից խմորեղէնների հետ:

Նոր տարուայ գիշերուայ ընթրիքի սեղանը պատրաստ է լինում սովորաբար ժամը ութին-տասին: Տօնական սեղանին փռւում է լաւագոյն սփռոցը, դրւում է լաւագոյն սպասքը: Որոշ ընտանիքներում Նոր տարուայ համար յատուկ սպասք է պահւում, որն օգտագործւում է տարին մէկ անգամ: Տօնական սեղանին միանգամից դրւում են սառը նախուտեստները, խմորեղէնները, չոր (խնձորի, սալորի, թզի, տանձի, սեխի, ձմերուկի, ծիրանի, դեղձի…) ու թարմ միրգը, ընդեղէնը (հնդկական ու յունական ընկոյզ, պիստակ, նուշ, կաղին, շագանակ, զանազան կորիզներ…), կոնֆետների տեսականի, աղանձ, հիւթեր, ոգելից խմիչքներ: Չափազանց սիրուած են «ընկուզերշիկ»ն ու շաքարի հետ խառնած եւ վանիլով ու դարչինով համեմած ընկոյզի փշուրներով հմտօրէն լցոնած ոսկեգոյն դեղձը՝ «ալանին»: Մրգերից շարունակում են պարտադիր մնալ խնձորը, տանձը, նուռը, սակայն դեռեւս խորհրդային տարիներից Նոր տարուայ կարեւոր մրգեր են համարւում ցիտրուսայինները (երեխաները դեռեւս յիշում են յայտնի բանաստեղծութեան երկտողը՝ «Տանձ, խնձոր, մանդարին, շուտով կը գայ Նոր տարին»):

Քաղաքներում շատերն սկսել են տարբերակել քաղցրեղէնի եւ հիմնական ուտեստի սեղանները: Ուտեստի տեսականին կտրուկ փոխուել է: Աւանդականից տօնական փաստացի պարտադիր ուտեստի տեսականուց մնացել են «պասուց տոլման», ընդեղէնը եւ չրեղէնը: Ի տարբերութիւն աւանդական Նոր տարուայ, այսօր բացարձակ գերիշխանութիւն ունի մսեղէնը, այդ թւում՝ նախուտեստների մէջ (երշիկների տեսականին, բաստուրման, սուջուխը, խոզի տոտիկները, ապխտած խոզի միսը): Սակայն եթէ նախուտեստների տեսականին զգալիօրէն բազմազանեցւում է

բանջարեղէնով (աւելուկի, սունկի, ճակնդեղի, լոբու աղցանները, բանջարեղէնի մի քանի տեսակից (գազար, կարտոֆիլ, ճակնդեղ, կանաչ ոլոռ, սոխ, համեմ, մաղադանոս եւ այլն) հմտօրէն շերտաւորած եւ ձեւաւորած աղցանը եւ այլն), ապա հիմնական ուտելիքը միայն միս է:
Գործնականում համատարած է ջեռոցում կարմրացրած խոզի բուդը, այսօր աւելի ու աւելի է տարածւում հայոց մէջ աւանդոյթներ չունեցող հնդկահաւը: Նախուտեստների հետ դրանք Նոր տարուայ գիշերային խնջոյքի կարեւոր բաղկացուցիչներն են: Ոմանք նաեւ խորոված են անում: Նոր տարուայ մսեղէն ուտելիքներից են նաեւ «քիւֆթան», «իշլի քիւֆթան», խաղողի տերեւով փաթաթած մսով «տոլման», աղացած մսից պատրաստուող եւ իւղի մէջ տապակուող բլիթները եւ այլն: Նոր տարուայ «մսով տոլմային» ոմանք, վանեցիներից փոխառած սովորոյթով՝ ծեծած կանեփ են խառնում: Սիւնիքում շարունակւում է Նոր տարուն «Ղափամա» պատրաստելու աւանդոյթը.
Համարւում է, որ Նոր տարուայ սեղանի ուտեստի տեսականին կարող է ազդել ընտանիքի բարեկեցութեան վրայ, եւ առատ, ճոխ ուտեստով տարին սկսելը իւրատեսակ հմայութիւն է:
Տարեմուտը դիմաւորում են ժամը տասներկուսին՝ բոլորած ընթրիքի սեղանի շուրջը: Հեռացող տարուայ վերջին րոպէներին հեռուստացոյցով լսում են երկրի նախագահի եւ Ամենայն հայոց կաթողիկոսի շնորհաւորանքներն ու օրհնանքը, եւ ճիշդ ժամը տասներկուսին, զանգերի ղողանջների տակ, պայթիւնով բացում շամպայնի շշերը: Քաղաքների հրապարակներում մեծ հրավառութիւն են անում քաղաքապետարանները:

ՏԱՐԵՄՈՒՏԸ

Նոր տարին մուտք է գործում մարդկանց տները ժամը տասներկուսին՝ աղմուկով բացուող պատուհաններից ու դռներից: Հէնց այդ պահին է, որ Նոր տարին իր բոլոր սպասելիքներով պիտի թափանցի տները: 2009թ. այս պահը նկատի ունէր «Արարատ» միութիւնը՝ հայրենակիցներին ուղերձ յղելով.

«Թէ աշխարհում փակ դռներ կան,
Թող որ բացուեն այս գիշեր,
Ու Նոր տարին նոր խնդութեամբ
Թող ներս մտնի այս գիշեր:
Թէ կան սրտեր նախանձով,
Դառնան բարի ու ներող,
Եւ ուրիշի ուրախ կեանքով
Խանդավառուեն այս գիշեր:
Թէ աշխարհում կան պանդուխտներ,
Թող տուն դառնան այս գիշեր,
Հայրենական յաւերժութեամբ
Ողջագուրուեն այս գիշեր»:

Միաժամանակ սկսւում են հրավառութիւնները. հինգ-տասը րոպէ զանգերի ղօղանջի տակ ամէնուր բացուող շամպայնի շշերի ու հրթիռների պայթիւնների ձայներ է եւ՝ երկինք խոյացող լոյսերի սլացք: Աղմուկով հեռանում, անցեալ է դառնում հին տարին եւ աղմուկով ողջունում են Տարեմուտը: Լսւում են բաց պատուհաններից միմեանց շնորհաւորող հարեւանների ձայները: Ընդամէնը կէս ժամ է տեւում ներընտանեկան հաւաքը: Քաղաքների բազմաբնակարան շէնքերում եւ գիւղերում պատանիները փոքր խմբերով այցելում են շէնքի կամ հարեւան շէնքերի բնակիչների տները: Այդ այցելութիւնները կարճատեւ են՝ տաս-տասնհինգ րոպէ: Մտնում են տուն, շնորհաւորում, մի պատառիկ ուտում եւ անցնում յաջորդ բնակարան: Այդ այցելութիւնները կարող են շարունակուել մինչեւ առաւօտ, եւ ամէնուր նրանց սիրալիր դիմաւորում են: Երիտասարդները շտապում են բակերում, հրապարակներում շարունակուող պարերին մասնակցելու: Գիւղերում յաճախ խարուկահանդէսներ են կազմակերպում: Քաղաքների որոշ բազմաբնակարան շէնքերի բակերում բնակիչները սեղան են դնում բակերում, իւրաքանչիւրն իր տնից որոշ ուտելիք ու խմիչք է բերում եւ մինչեւ ժամը գիշերուայ երեք-չորսը հարեւանները, միմեանց շնորհաւորելով՝ խմում են, պարում ու երգում են: Տարեցները մնում են տանը, դիտում են հեռուստացոյցով ցուցադրուող տօնական «շոու»ն եւ ընդունում են հիւրերին:

Տարբեր հեռուստալիքներով ցուցադրուող Նոր տարուայ «շոու»ն իրենից ներկայացնում է յայտնի ընդհանուր խնջոյքի սեղանի շուրջ բոլորած քաղաքական գործիչների, դերասանների, երգիչների՝ միմեանց յաջորդող ելոյթներ, երգիծական մանրապատմումներ, երգ ու պար:
Գիշերը «Ձմեռ պապը» երեխաներից գաղտնի նուէրներ է դնում նրանց բարձի տակ:
Յունուարի մէկին եւ երկուսին, երբեմն՝ նաեւ երեքին, տօնահանդէսը շարունակւում է: Դրանք այցելութիւնների օրեր են: Այցելում են ծնողներին, տատ ու պապերին, մօտ ազգականներին: Այդ օրերին սեղանները միշտ լեցուն են: Այցելուները սովորաբար քաղցրեղէն ու խմիչք են տանում հիւրընկալներին:
Որոշ վայրերում բոլոր ազգականներն ու մտերիմները այցելում են այդ տարի ննջեցեալ ունեցած ընտանիքներին:
Տօնահանդէսը, աստիճանաբար մարելով՝ աւարտին է մօտենում Յունուարի 13ին՝ «Հին Նոր տարուն»՝ այդ օրը մէկ «բռնկում» եւս ունենալով:

«ՀԻՆ ՆՈՐ ՏԱՐԻՆ»

Յունուարի 13ին, խորհրդային տարիների ձեւաւորուած աւանդոյթով, նշւում է «Հին Նոր տարին»:
Հին Նոր տարի անունը պարզապէս նշանակում է՝ հին տոմարով նշուող Նոր տարի: Նոր՝ Գրիգորեան տոմարը, Ռուսաստանում պաշտօնապէս ընդունուել է բոլշեւիկեան յեղափոխութիւնից յետոյ՝ 1918թ., Հայաստանում, համապատասխանաբար՝ 1920թ.: Հին եւ նոր տոմարների տարբերութիւնը 13 օր է, այսինքն՝ նոր տոմարով Յունուարի 13ը համապատասխանում է հին տոմարով Դեկտեմբերի 31ին:
Չնայած այցելութիւնները հիմնականում կատարւում են մինչեւ Յունուարի 3ը, սակայն մինչեւ Յունուարի 13ը, կարելի է այցելել եւ շնորհաւորել: Սովորաբար, մինչեւ Յունուարի 13ը պահպանւում են Ամանորեայ զարդարանքները, տօնածառերը, կատարւում են հանդիսութիւններ, աշխատավայրերում կազմակերպւում են ցերեկոյթներ ու դիմակահանդէսներ: Յունուարի 13ի լոյս 14ի գիշերը, հեռուստաալիքները կրկնում են Յունուարի 1ի գիշերային «շոու»ն: Ընտանեկան-ազգակցական կապերն ամրապնդող յունուարմէկեան այցելութիւնները փոխարինւում են ընկերական հաւաքներով. այդ գիշեր, նոյնպէս, հրապարակներում հրավառութիւն է եւ երաժշտութիւն, պարեր ու խնջոյքներ:

«ՄԵՐ ԱԶԳԸ, ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ»

Ուշագրաւ է, որ ամանորեայ բարեմաղթանքները, ուղղուած լինելով անձին՝ այնուամենայնիւ զգալի չափով պահում են «մեր ազգին, մեր ժողովրդին, մեր երկրին», երբեմն նաեւ՝ «ամբողջ աշխարհին» ուղղուածութիւնը: Դա այնքան էլ ընդգծուած չէ գրաւոր շնորհաւորանքներում (բացիկներ, նամակներ…), բայց ցայտուն երեւում է կենացների ժամանակ արտայայտուած մաղթանք-բանաձեւերից՝ «Բարին մեր երկրի, մեր ժողովրդի վրայ լինի», «Մեր բազմաչարչար ժողովուրդը երջանիկ լինի», «Խաղաղութիւն լինի մեր երկրին եւ ամբողջ աշխարհին», «Անցաւորների վրայ հողը թեթեւ լինի, ապրողներին խաղաղութիւն բերի այս Նոր տարին»: Շարունակում է շատ սիրուած մնալ Ռափայէլ Պատկանեանի՝ 150 տարուայ վաղեմութեան «Նոր տարուայ ուղերձ» բանաստեղծութիւնը, որի երաժշտական կատարումը Ռուբէն Հախվերդեանի կողմից հնչում է ամէնուր.

Երնէկ, թէ այս նոր տարին,
Վերջ տար հայի ցաւերին,
Չարը կորչէր ու բարին
Բուն դնէր մեր սրտերին:
Երնէկ, թէ այս Նոր տարին,
Ազատ շնչէր Հայաստան,
Եւ շուրջ Մասիս մեր սարին
Փայլէին վարդ-անդաստան:
Երնէկ, թէ այս նոր տարին
Հայ ազգ ի մի գումարուէր,
Ի գլուխ Կարնոյ հայ ամրին
Հայի դրօշակ ծածանէր:

Երնէկ, թէ այս Նոր տարին,
Ոտքի կանգնէր Հայաստան,
Եւ կիսաքանդ մեր Կարին
Լինէր քաղաք մեր Ոստան:
Հայեր, երբեք չերկմտիք,
Կը կատարուի այդ ամէն,
Եթէ իսպառ մենք հանենք
Փոքրոգութիւն մեր սրտէն:
Շնորհաւոր Ձեր Նոր տարին, երջանիկ եղէք, բարի եղէք, իւրաքանչիւր տարին թող աւելացնի Ձեր բարութիւնն ու ուրախութիւնը եւ նուազեցնի վիշտը, տխրութիւնն ու թախիծը: Խաղաղութի՛ն ամենեցուն: